№ 59 ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 17

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 17 № 59

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն երից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆոն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, տան և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., հօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 բուբլի Մարտի 1-ից մինչև 1 յունիսի 2 բուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Մտարգրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գիտել հետևեալ հասցէով: ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Վարդուհի և Եփրեմ Ծատուրեանները իրանց զաւակների հետ և Մնացական Նալբանդեանը յայտնում են իրանց ազգականներին ու ծանօթներին առաջինի սկսորդ, երկրորդի մօր և վերջինների տատի

ՀՌԻՓՍԻՄԷ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

մահվան մասին: Հոգեհանգիստը կատարվելու է մարտի 17-ի և 18-ի երեկոյեան, ժամը 6-ին: Յուղարկաւորութիւնը Ե. Ծատուրեանի բնակարանից (Բարիչևսկայա № 9) կիրակի, մարտի 19-ին, առաւօտեան ժամը 10-ին դէպի Մողնու ս. Գէորգ եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը:

1—2

ԲԺՇԿԱՊԵՏ

ԳՐԻԳՈՐԻ ԵՕՍԻՖՕՎԻՉ

ԳՈՒՐԳԷՆՕՎ

Խարկովի համալսարանի մանկաբարձական և գինէկոլօգիական կլինիկայի նախկին օրդինատոր (պրոֆէսոր Տօլոչինովի) ընդունում է մանկաբարձական և կանանց հիւանդութիւններ ունեցող հիւանդներին: Առաւօտեան 10—12 ժ. և երեկոյեան 5—7 ժամը: Գօլոֆինսկի № 12, տուն Մադիսանի, Արտիանական ընկերութեան հանդէպ:

(Հ.Հ.ու.) (առ) 2—10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարլամենտական ընտրութիւններ. Վերջին տեղեկութիւններ. Դէպքերը Վրաստանում. Մամուլ. Տեղեկութիւններ գաւառից. Սպասվող ամիսները. Իշխան Կ. Արզութեան. Հայասական գրութիւն. Մեր ցաւերը. Ծագող կիսալուսինը. Պատասխան Գիտաբէդի գործադրանի կառավարչին. Մինչև երբ հոսէ կարմիրը. Նամակներ խմբագրութեան. Թատրոն և երաժշտութիւն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մակեդոնական հարցը. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

I

Մօտենում են Պետական Դումայի պատգամաւորների ընտրութեան օրերը: Արդէն սկսում են մեզանում խօսել Նախապարտական ժողովների և հաւանական թեկնածուների մասին:

Սակայն թէ նկատվում է մի առանձին աշխոյժ և ոգևորութիւն հասարակութեան խաւերում՝ անկարելի է: Ոչ: Չը կան աշխոյժը և ոգևորութիւնը:

Եւ հասկանալի է որ չեն էլ կարող լինել: Թէ ընդհանուր պետական և թէ մեր երկրի հանգամանքները նպաստաւոր չեն ընտրողական գործի ընդարձակ զարգացման և առանձին ոգևորութեան համար:

Բայց մի որոշ ատիճան հետաքրքրութիւն սկսել է երևան գալ ինտելիգենցիայի շրջանակներում:

Վարչութիւնը իր կողմից յայտարարել է ցուցակներ կազմելու մասին հրահանգներ:

II

Ո՞ւմ պէտք է ընտրել և ինչ ծրագիր ունեն իրագործելու ընտրվածները—ահա մի հարց, որ մեծ նշանակութիւն պէտք է ունենայ ընտրողական պայքարի և ագիտացիայի ժամանակ:

Պարլամենտական բոլոր երկիրներում գոյութիւն ունեն քաղաքական կուսակցութիւններ, որոնց և պատկանում են թեկնածուները: Իւրաքանչիւր ընտրելի, պատկանելով որոշ կուսակցութեան, գործում է պարլամենտ կամ ազգային ժողով, պաշտպանելու այն ծրագիրը, որը նա ընդունել է իբր իր դաւանանք, որը մշակել է նրա կուսակցութիւնը իր անդամների գործակցութեամբ:

III

Թէ ինչ քաղաքական կուսակցութիւններ կը կազմակերպվին մեզանում և ազդեցիկ դեր կը խաղան կեանքի ասպարէզում և պարլամենտական նիստերում—դա մեր ճակատագրի ապագան ցոյց կը տայ:

Անկասկած՝ ինքը պարլամենտական կեանքը և զանազան հոսանքների միմեանց հետ ընդհարվելը ազդեցութիւն կունենան պարլամենտական համախմբումների վրա:

Եթէ խօսելու լինենք այն կուսակցութիւնների մասին, որոնք ներկայումս գործում են Կովկասում, մենք կարող էինք յիշատակել սահմանադիր-ռամկավարներին, սոցիալիստներին և 17-ականներին: Մենք չենք խօսում աւելի մանր ճիւղաւորութիւնների մասին:

IV

Ոչ մէկը այդ վերև յիշած կուսակցութիւններից դեռ ընտրողների զօրքեր չունի իր տրամադրութեան տակ: Ինչ որ լինի, պէտք է լինի այսուհետև ընտրողական շարժման ժամանակ:

Ցաւենայն դէպս մենք կարող ենք ասել, որ 17-ականները, այսինքն հոկտեմբերի 17-ի մանիֆէստի անունով հաստատվածները, առանձին աջողութիւն մեր երկրում չեն կարող ունենալ, որովհետև դրանք դէմ են տեղական ինքնավարական ծրագիրներին: Այդ կուսակցութեան պատկանողները մեծ մասամբ չինովնիկներ են, որոնք համեմատած միւս ազգութիւնների հետ՝ ճիշտ փոքրամասնութիւն են կազմում:

Սոցիալիստները, այսինքն սոցիալ-դեմոկրատները և սոցիալ-յեղափոխականները լինելով արտայայտիչ աշխատաւոր դասակարգային պահանջների, կարող էին որոշ ներկայացուցչութիւն հանդէս բերել, բայց նրանք դեռ չեն յատարարել իրանց իբրև պարլամենտական կուսակցութիւններ և համարում են նախապարլամենտական շրջանը չաւարտված, ուստի և գործունէութեան նախկին ծրագիրը դեռ չը սպառված:

V

Ինչ վերաբերում է սահմանադիր-ռամկավարներին, նրանք մինչև այժմ միայն իրանց ծրագիրն են հրատարակել և տարածել, իսկ կազմակերպող գործունէութիւն դեռ քիչ են ունեցել:

Ցաւենայն դէպս, դա միակ կուսակցութիւնն է, որ այժմ հրապարակի վրա գործում է: Նա ունի բիւրօներ, կարդում է դասախօսութիւններ, հրատարակում է հրահանգներ և կազմում է կանոնաւոր խորհրդակցութիւններ: Չը նայելով այդ արածներին, դարձեալ կասենք, որ նրա կազմակերպութեան գործողութիւնը դեռ թոյլ է և եթէ նա ուզում է դեր կատարել, պէտք է աւելի մեծ չափով ձեռք զարկել գործի:

VI

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, մենք ամիսներ առաջ համակրութիւն էինք ցոյց տուել սահմանադիր-ռամկավար կուսակցութեան, ցանկանալով խմբված լինել նրա արմատական կամ ձախակողմեան ճիւղի մէջ: Վերջին ամիսները եկան մեզ համոզելու, որ մենք սխալված չենք եղել ոչ միայն ծրագրի այլ և գործողների վերաբերմամբ: Ռուսական հասարակական գործողների և ինտելիգենցիայի շատ համակրելի ներկայացուցիչները գործում են այդ կուսակցութեան մէջ և օրից օր աւելի ու աւելի վատահութիւն են ներշնչում դէպի իրանց կուսակցութիւնը:

Պարլամենտական կուսակցութիւններից դա ներկայումս ամենաձախակողմեան կուսակցութիւնն է: Նա կարողացել է ընտրութիւնների ժամանակ մի քանի թեկնածուներ անցկացնել:

Յայտնելով մեր համակրութիւնը սահմանադիր-ռամկավար կուսակցութեան և ցանկալով նրա աջողութիւնը, մեր լրագիրը, ինչպէս մի անգամ ևս գրել ենք, վերապահում է իրան անկախ դիրք՝ քննադատելու թէ գործողներին և թէ կուսակցութեան գործունէութիւնը ամենալայն չափով:

Ընտրութիւնների հետ կապված խնդիրների և պայմանաւոր համաձայնութիւնների մասին մի ուրիշ անգամ:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Գնդապետ Իսայեվիչը հեռագրում է Կովկասի Գոխարքային, որ Զարզալա գիւղում գտնված է 7 թնդանօթ և 200 հրացան: Ազատված է մէկ գերի վերցված թուրք: Գեռաբեկ գիւղի թուրքերը յանձնեցին 300 հրացան:

—

Բագուից, մարտի 16-ին պ. Դուլեանը ստացել է հետևեալ հեռագիրը.

«Բոզդան Դօլուխանովի առողջական դրութիւնը չէ որոշված. վաղը կը պարզվի: Առ այժմ ինքնազգացումը բաւարար է: Ակամտեանները ասում են, որ բէվօլվէր է արձակել վրացի կամ հայ բանւոր: Որպէս կարծում են, պատճառը դրամական հաշիւն է: Ցանցաւորը անհետացաւ»:

—

Բագու, 16 մարտի, 2 ժամ 2 ր. ցերեկվայ.

«Դօլուխանեանի առողջութիւնը աւելի բաւարար է: Ջերմութեան ատիճանը սովորական է: Ինքնազգացումը լաւ է: Քաղաքում հանդիստ է բոլորովին».

Մարգարեան

—

Մեծ Բրիտանիայից եկած մի խումբ անգլիացիներ գնացել են զէպի Ելախ և Շուշի՝ անհետ կորած անգլիացի Յոսկիին որոնելու համար: Նրանց պաշտպանութեան համար նշանակված են պահակներ՝ բաղկացած ժանդարմներից և զինուորներից:

—

Թուրք-հայկական ընդհարումների ժամանակ, ինչպէս յայտնի է, կոտորածներից փախած հայ ընտանիքներ կան, որոնց թիւը 400 է և որոնք ապաստարան են գտել մասամբ Հալաբարում և մասամբ քաղաքիս 4-դ մասում: Զորեքշաբթի, մարտի 15-ին, դրանցից 125 հոգի, Բաքու գիւղից, Կորուն վարպետի առաջնորդութեամբ ճանապարհ ընկան Գանձակ և այնտեղից կուղարկվեն իրանց հայրենիքը: Բացի այդ՝ մի քանի օրից յետոյ Թիֆլիսից նոյնպէս ուղարկվելու են իրանց տեղերը 60 հոգի. դրանց մէջ, ինչպէս յայտնի է, շատ կրզէնցիներ կան:

—

Վրաց «Էլվա» լրագրի Բագուի թղթակիցը գրում է. «Բիւրօկրատիայի պրովոկացիայի շնորհով առաջացրած հայ-թուրքական ընդհարումը դպալի ազդեցութիւն ունեցաւ բանւորների վրա և նրանցից հարիւրաւորներ ու հազարաւորներ մի կողմ հացի կարօտ են մնացել: Ոչ մի տեղ չէք տեսնի այնքան անգործ մնացած բանւորների, պրոլետարների և անառակ կանանց, որպէս Բաքուում: Համարեա ամեն օր բանւորները գնում են Նաֆթարդիւսաբերական ժողովի գրասենեակը և ձրի տոմսակ են խնդրում հայրենիք վերադառնալու համար, սակայն նրանց ոչ ոք լսող չը կայ և այդպէս մարդիկ փողոցներն են թափված: Թէպէտ և մի քանի ֆիրմաներ սկսեցին փողոց ժողովել՝ նրանց հայրենիք ուղարկելու համար, սակայն մինչև փողոց հաւաքելը նրանցից շատերը սովի զոհ կը դառնան: Այստեղ ևս իշխում է ըէակցիան: Իւրաքանչիւր քայլափոխում կը հանդիպէք սուլիներին և ոստիկաններին: Խուլիգանները ազատօրէն շրջում են: Խուզարկութիւնները և ձերբակալութիւնները յաճախ են: Մարտի 7-ին ոստիկանութիւնը խուզարկեց «Ցէսարեվիչ» շոգենաւը, սակայն ոչինչ չը գտաւ: Մարտի 8-ին կրկին խուզարկեցին Կրասնովոդսկից եկած «Կայսրուհի Ալէքսանդրա» շոգենաւը և մի ճանապարհորդի մօտ բէվօլվէր են գտել: Ճանապարհորդին խիստ և եթէ կալանաւորեցին»:

ԴԷՊԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

—

Գուրիա, մարտի 12-ին: Բնութիւնը արթնացել է, դաշտերը և ծառերը կանաչել են. բնութիւնը ամենայն տեղ կեանք և ուրախութիւն է բերում, միայն մեզ, գուրիացիներիս համար, տխուր մտածմունք և յուսահատութիւն է: Բնակիչները չը գիտեն՝ սկսեն աշխատանքները թէ ոչ, չը գիտեն իրանց ինչ է սպասում, երբ վերջ կը լինի պահանջներին: Ներկայումս էլ Օզուրգէթում պաշարողական դրութիւն է: Մի անյայտ անձ գնդապետ Կրիլովին անանուն նամակ է ուղարկել, որի մէջ նա գրում է. «Հեռացիր այստեղից, թէ չէ հոգիդ կը հանեմ»: Կրիլովն էլ սաստիկ բարկացել է և չը գիտէ թէ ում օձիքից բռնէ: Ժողովուրդը հաւատացած է, որ դա պրովոկատորների և լրտեսների գործն է, բայց բանից երևում է, որ Կրիլովը լրտեսներին է հաւատում: Մինչև այժմ Կրիլովի մօտ խնդիրքով ներկայացողներին ներս էին թողնում բակը, իսկ այժմ Կրիլովի բնակարանից հեռու են կանգնեցնում ժողովրդին, այնտեղից նրա ադիւտանտը խնդիրը առնում է և յանձնում նրան:

Երկու օր սրանից առաջ Խրդիսթաւիում սկսեցին այրել և քարուքանդ անել կասկածաւոր անձերի տները և խանութները. մինչև երէկ այրեցին և քանդեցին 8 տուն և բազմաթիւ խանութներ: Խանութները Խրդիսթաւիի բնակիչներին էին քանդել տալիս: Ամեն մի տան այրելը սարսափեցնում էր իր զզրոցով առանց այդ էլ վախեցած և տանջված ժողովրդին: Պետական Դումայի մասին այստեղ էլ են խօսում, բայց այստեղի գիւղացիները լաւ են հասկացել Դումայի նշանակութիւնը և ում հետ էլ խօսակցութիւն եմ ունեցել, բոլորն էլ միևնոյն կարծիքի են. «մեզ համար օգուտ չունի, չեն անի, և եթէ կը հրամայեն, ինչ կարող ենք անել, եթէ չէ՝ ոչ մի մարդ չէ ուզում Դումային մասնակցել». իսկ աւելի հասկացողները զարմանում են Թիֆլիսի սահմանադիր-ռամկավար կուսակցութեան երկդիմի քաղաքականութեան վրա, որով նրանք որոշել են մասնակցել Դումայի ընտրութիւններին. նրանք ասում են, որ այդ վարմունքը չէ սազում ծայրահեղ կուսակցութեանը, որովհետև կառավարութիւնը նախ՝ ոտնատակ արեց, յետոյ գրաւեց, ինչպէս մինչերին թակարդում դմակի կոտը են զցում: Ներկայումս այստեղի բանտում մօտ 30 բանտարկվածներ կան: Երկու օր սրանից առաջ մի երիտասարդ օֆիցէր, ինչպէս երևում է, ճանձրացել էր անզործութիւնից, ծածկից սպիտակ գազ, նստեց սպիտակ ձիու վրա և քշեց. նա իջաւ բանտի առաջ, ներս վազեց բանտը՝ բանտարկվածների մօտ, և մտրակը աջ ու ձախ պատեցնելով բոլորին մտրակեց—«Թագաւորի դատաւորներին», իսկ յետոյ, երբ բաւականութիւն ստացաւ, դուրս եկաւ բանտից և ձիով գնաց շտաբը: Ոչ բանտարկվածները և ոչ իշխանութիւնը ձայն չեն հանել, չեն բողոքել. ճիշտ սրան են անուանում—«աշխարհը տեսայ առանց շան և միջով անցայ առանց փայտի»...

Երէկ Օզուրգէթի մօտ իջած քիւրդ խաշնարածների վրա անյայտ չարագործներ յարձակվեցին, խլեցին փոդ: Այսօր այս քրդերը սարսափելիների հետ միասին մտն էին գալիս քաղաքում և «գողերին» ձերբակալում էին. ձերբակալեցին 2 մարդու:

Կողոպուտը և թալանը Գուրիայում չէ պակասում, և առանց այդ էլ վրդովված և աղքատացած ժողովրդի մօտ մտնում են զինված գուրիացի աւազակներ և ինչ որ կօգնները չեն կարողացել տանել, միացողը նրանք են վերցնում: Երէկ էլ յարձակվեցին Իօսէփ Նաֆշաիձէի վրա, որը իբրև քաղաքական յանցաւոր՝ բանտարկված էր, և որին մի քանի օր առաջ արդարացրին և արձակեցին քանից:

(Յ. Փ.)

—

Մեզ հաղորդում են, որ Զուգդիդի գաւառի Խոնի գիւղում բանտարկեցին երկու եղբայրներ Նօրակիձէներին, որոնք մեղադրվում են ժողովրդի մէջ կառավարութեան դէմ պրոպագանդա անելու մէջ:

ՄԱՄՈՒԼ

—

Պետական Խորհրդի անդամ Վ. Զրևանսկին, որ յայտնի է իբրև իսլամութիւնը ուսումնասիրող, ներկայացրել է հաւատի մասին կազմված առանձին խորհրդակցութեան մի մանրամասնօրէն մշակված զեկուցագիր մուսուլման կնոջ դրութեան մասին: Այդ զեկուցագիրը առաջ է եկել զըլխաւորապէս այն պատճառով, որ շատ մուսուլմաններ միջնորդութիւն են յարուցել արգելել մուսուլման կանանց մտնել անառականոցները: Մի և նոյն ժամանակ մուսուլմաններից մէնը ի պաշտպանութիւն մուսուլման կնոջ խնդրել է, որ բազմակնութիւնը արգելվի: Նա խնդրում է ուշադրութիւն դարձնել առհասարակ մուսուլման իսլամն սեռի թշուառ և ցաւալի վիճակի վրա և պաշտպանել նրան, արգելելով բազմակնութիւնը, որը ոչ միայն կորստաբեր կերպով է ազդում կանանց վրա, այլ և խայտառակութիւն հանդիսանում ռուսահպատակ մուսուլմանների համար: Զրևանսկին երկու հարցերն ևս լուսաբանել է բազմակողմանի և խնամքով: Նա ասում է, որ մուսուլման կնոջ դէպի անառակութիւնը դրդող պատճառը, իբրև գուրանի մէջ է, որ զրկել է իսլամն սեռը մարդկային բոլոր իրաւունքներից և այն սաստիկ հեշտութեան մէջ, որով կատարվում է ապահարզանը: Ինչ վերաբերում է բազմակնութեան, Զրևանսկին կարծում է, որ պէտք է թոյլ տալ, որ նա ինքն իրան քայքայվի, քանի որ նրա սիւները արդէն որդած են, և կառավարութիւնը չը պէտք է միջամտէ այդ հարցի մէջ: Նա առաջարկում է միայն օրէնսդրական եղանակով հասնել մուսուլման կնոջ օգնութեան, հաստատելով հետևեալ կանոնները. 1) ապահարզան ստացած և ապրուստի սեփական միջոց չունեցող կանանց պաշտպանութիւնը յանձնել մուսուլման համայնքներին, հասարակական արդիւնքների հաշուով: Ստանալով համայնքից ապրուստի միջոց՝ մուսուլման կանայք, եթէ մնան անառականոց, զրկվում են այդ օգնութիւնից յաւիտեան. 2) մի կնոջից աւելի ունեցող մուսուլմանը չը պէտք է ընտրվի և նրանց. «ինչու մոռացվեց հողի հարցը»:

«Հողագուրկ հայ գիւղացիութեան անունից դիմում ենք մեր հայ պատգամաւորներին—ասում է նա—և հարցնում. ինչու հողային հարցը նրանք մոռացան. ինչով բացատրել այս յանցաւոր մոռացութիւնը»:

Իսկ ամբողջ համագումարին «Աշխատանքը» մեղադրում է, որ նա մոռացաւ, թէ հայ ժողովրդին նախ և առաջ հարկաւոր է հող, իսկ թուրք ժողովրդին՝ ազատութիւն—ֆէօդալ բէկերի, ազաների իշխանութիւնից և համայնատութիւնից:

Տեսնենք ինչ կը պատասխանեն հայ պատգամաւորները:

*

«Ֆրանկֆուրտի Լրագիրը» մի առաջնորդող յօդուածի մէջ, որ նուիրված է մարտի 1-ի քսանհինգամեակին, զարմանք է յայտնում, թէ մի քառորդ դարի ընթացքում ոչ ռուսաց յեղափոխականները, ոչ ռուսաց կառավարութիւնը գրեթէ ոչ մի բան չը սովորեցին և կրկնում են իրանց նախորդների սխալները: Այժմ էլ ռուս յեղափոխականները ցոյց են տալիս նոյն անձնուիրութիւնը գործի, նոյն պատրաստականութիւնը ինքնազոհութեան համար, ինչպէս 25 տարի առաջ: Եւ այժմ, ինչպէս Ալէքսանդր II-ի մահից առաջ, նրանք վիճում են այն մասին, թէ սահմանադրութիւնը օգտակար է թէ անօգտակար սոցիալիզմի զարգացման համար...: Փոխանակ միացեալ ոյժերով ձեռք բերելու, որ Դումայի մէջ մանկն օրգան կարելի է շատ պրոգրէսիստ տարրեր, ռուս ազատամիտները վիճում են թէ առհասարակ պէտք է Դումա գնալ թէ ոչ: Իր ժամանակին Անգլիայում հանրապետականները չէին հարցնում, պէտք է գնան պարլամենտ թէ ոչ. դա հասկանալի էր նրանց համար. նրանք մտնում էին պարլամենտ և ամեն ջանք գործ էին դնում իրանց գաղափարները իրագործելու համար: Նոյնպէս վարվեցին և Ֆրանսիայի սոցիալիստները, որոնք սակայն քանի մը պիտի պըռատած ըլլաք քաղաքակրթութեան ըրած Ձեր բարիքներուն շարքը, և այնքան փառաւոր կերպով նախագահած Ձեր մեծ ազգը պիտի լիացնէք յաւիտենական երախտագիտութեամբը մարտիրոսներու՝ որոնք կեանքի կոչած պիտի ըլլաք»:

Թուսնոյի Թագաւորութիւնը տեղւոյն հայերուն կողմէ պիտի ուղղէ նաև շնորհակալութեան նամակ մը Պ. Պէրթլոյին, որ հայանպաստ ու գեղեցիկ շարժման նախաձեռնարկը եղաւ, ինչպէս նաև պատշաճ հեռագիր մը՝ Ֆրանսայի նախագահ Ֆալիէռին՝ անոր գոհակալութեան օրը:

Մլիվէն (Բօլգարիա) քաղաքի հայ գաղութը հետևեալ ուղերձն է ուղարկել նախագահ Թուզվէլթին:

Մլիվէնի և իր արուարձաններուն Հայութիւնը՝ շնորհապարտ կըզգայ ինքզինքն այն համակրութեան համար՝ զոր ցոյց տուած էք միշտ Հայաստանի և դժբաղդ ժողովուրդին նկատմամբ:

Մենք՝ սառագրեալներս՝ մեծ մասով անտուն և անհայրենիք տարագրեալներ, տասնեակ տարիներով ի զուր սպասեցինք օտարութեան մէջ Եւրոպական Տէրութիւններու խոստացած հայ երկրի բարենորոգումներուն, կեանքի, մեր օճախին և մեր պատիւին սրբազան երդմնութիւնը: Մեզմէ շատերը հոս, թշուառութեան մէջ մեռան, շատերը դեռ կոգուարին, մինչդեռ մեր մայրերը, մեր կիները ու մեր անպաշտպան զաւակները՝ մատնուած են անդին, Հայաստանի մէջ, անասելի զրկանքներու, չըքաւորութեան և բռնութեանց:

Մեր հայրենիքը՝ Սասունը, Զէյթունը, Վանը, Մարաշը, Հաճնը, Տարօնը, Բասենը, Կարսը, Ալաշկերտը, Արարատեան դաշտը, Գեղարքունիքը, Գանձակը, Նախիջևանը, Ղարաբաղը, Զանգեզուրը, Գոգարանը, Ղազախը, Շիրակը, Սալմաստը, Խոյը, Մարանդը, Սարուխանը, Գանձակը, Գեղարքունիք

Մենք կը հաւատանք թէ Արդարութեան բոլոր աղբիւրները ցամաքած չեն դեռ ազգերու սրտին մէջ և Ամերիկան մեծ ազգը ամէնէն աւելի յարմարութիւն ունի՝ իր մեծանուն և արդարակրով Նախագահին միջոցով յիշեցնելու Եւրոպային՝ իր խոստումներն ու յանձնառութիւնները՝ աշխատութեան և յառաջադիմութեան նուիրուած հայ ժողովուրդին նկատմամբ։

Ընդունեցէք, Տէր Նախագահ, մեր յարգանքները և երախտագիտական զգացումները։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Առաջնորդ, Զէյթունցիներ գաւառ, մարտի 8-ին։ Զը նայած գենեռալ Գօլոշչապօվի ձեռք առած եռանդուն և խիստ միջոցներին՝ Եւլախ-Շուշի տրակտի հաղորդակցութիւնները քանալու հայերի ու թուրքերի մէջ խաղաղութիւնը վերականգնելու համար, չը նայած այդ գործունեայ գեներալի եռանդուն ու անկեղծ գործողութիւններին և աշխատութիւններին՝ սերտ կապ հաստատել այդ թշնամացած տարրերի մէջ, այնուամենայնիւ մուսուլման տարրը միշտ խանգարել է ու խանգարում է այդ բարի գործը։

Օրինակ, որանից մի քանի օր առաջ Եւլախ-Շուշի տրակտի վրա, Բարդու մօտերքին «Գէօզթափա» անուանեալ տեղում, մի խումբ գնացած թուրքեր, բաղկացած մօտ 10 հոգուց, յարձակվում են Շուշուց Եւլախ գնացող գիւղացիների վրա, բայց մինչև այսօր չարգործները դեռ ձերբակալված չեն։ Ուրեմն ինչպէս մենք հաւատանք, որ թուրքը հաշտ է ի նկատի ունենալով՝ նորերս Եւլախ-Շուշի տրակտում հայերի կողոպտվիլը. չէ՞ որ այդ տեսնելով, մենք պէտք է մտածենք, որ թուրքը մեզ հետ սրտով չէ հաշտվում և երեսնց հաշտութիւն խնդրելով՝ կամ իրան շահերի համար է այդ կեղծիքը և կամ նա մեր գլխի տակին փափուկ բարձեր դնել է ուզում։

Շուշում հաշտութիւնը կնքելուց յետոյ՝ Ազդամից դէպի Շուշի մասին սկսել են գնալ թուրքեր և հայեր, թէ արաբաներով, թէ բեռնոտած էշերի և ձիերի կարաւաններով։ Այդ ճանապարհորդ թուրքերը և հայերը, ճանապարհը շարունակելով «զրոյց»-ներ են անում իրար հետ անցեալ արիւնահեղ դէպքերի մասին, ներկայ թուրք-հայկական ընդհարումների ժամանակ։ Մի թուրք ասում է այսպէս. «Այ հայեր, ճշմարիտ է, այս կռիւների ժամանակ ուսը մեր կողմն էր, բայց պէտք է հաստատվել, որ Ալլահն էլ ձեր կողմն էր»։ Մի ուրիշ քարվանչի թուրք էլ ասում է այսպէս. «Այ հայեր, հաշտութիւն բնաւ չի լինելու երբեք. մենք մի վէրքին չենք կարողանում դիմանալ, մէթէ՝ ձեր մեզ ասած այնքան վէրքերին դիմանալու ենք, ուրեմն ինչ չաղ անասուններ ունէք, մորթոտեցէք ու մի լաւ քէֆի արէք, որովհետև մեր քէկերի ու առաջնորդների վճիռը այնպէս է, որ այս առաջիկայ գարնանը ձեզ բոլորիդ ջնջենք. մեր հաշտվելուն գուբ շատ մեք հաւատայ...»։ Մի ուրիշ էլ ասում է այսպէս. «Այ էրմաները, վալլահ-բիլլահ, մենք քասիրներս բնաւ պարտական չունենք հայերի հետ կռիւ մղելու, մենք միշտ հայերովն ենք ապրել. բէկերը, աղաները... իրանք իրանցով կարողանում են ապրել, ուստի ուզում են կռիւ մղել, իսկ մենք ազքատներս ուզում ենք հաշտ ապրել յաւիտեան, որպէս զի կարողանանք մեր երեխաների գոյութիւնը պահպանել։ բայց ինչ արած, որ մեր թուրք բէկերը, խանդաղանները մեզ չեն թողնում, որ բարիշենք. եթէ նրանք իմանան, թէ որ և իցէ մի թուրք ուզում է հայի հետ հաշտ ապրել և կամ հային համակրում է, այն ժամանակ իսկոյն կը սպանեն այդպիսի թուրքին»։ Զորրորդն ասում է այսպէս. «Ա՛խ, այ հայեր, ախր ինչ եղաւ մեզ, շէյթանի ու սարաբի տունը Ալլահը քանդէ, չէ՞ որ մենք երկվայ եղբայրներն ենք, իրարով ապրում էինք, ախր ինչ եղաւ մեզ, ինչո՞ւ մենք ուրիշների խելքովն ընկանք»։ Հայ քարվանչիքն էլ միշտ պատասխանում են, որ իրանք այդ բանում ամենևին մեղաւոր չեն և ինչ որ արին, իրանք թուրքերն արին. «Զէ-չէ էրմանի, բացականչում է մի ուրիշ՝ հրեշի դէմք ունեցող անճոռնի թուրք. պատմաղը դուբ էկք—դուբ էկք և ձեր վրա այդ շատ թանգ է նստելու...»։ Եւ այսպէս քարվանչիքը վիճաբանելով շարունակում են ճանապարհը։

Գնացողը Գօլոշչապօվի հեռանալը, ինչպէս երևում է, ուրախացրել է թուրք սրիկաներին ու չարագործներին, որովհետև նրա հեռանալուն պէս այդ սրիկաները սկսել են եռանդով քանացնել իրանց սիրելի ու թանկագին արհեստները։ Ափսոսում ենք ու ցաւում, որ այդ գործունեայ և գաղափարական, լուրջ ու անկեղծ ժամանաւոր պաշտօնեային (գենեռալ Գօլոշչապօվին) զրկեցինք։ Այդ պաշտօնեան եթէ երկար մնար իր նշանակած բայսնում, մեծ յոյս կար, որ շնորհիւ նրա արդարադատութեան, շուտ կը վերականգնեցնէր սերտ յարաբերութիւններ հայերի ու թուրքերի մէջ, բայց ինչ արած, որ մեր բախտից նրան շուտ տեղափոխեցին։ Նա ամենայարմար պաշտօնեան էր իր նշանակած բայսնում։

Բոլորս ապատում ենք, թէ ինչ է լինելու առաջիկայ գարնանը. բոլորի կարծիքն այն է, որ սարսափելի արիւնահեղ կռիւներ տեղի կունենան ներկայումս թշնամացած երկու հարևան ազգութիւնների մէջ (հայերի և թուրքերի) և միևնոյն ժամանակ բոլորի կարծիքն այն է, որ այդ արիւնահեղութիւնն առաջն առնողը միայն կարող է իշխանութիւնը լինել։

Բ. Զաքարեանց

—

Շուլաւէր, մարտի 15-ին։ Երկու օր Շուլաւէրում քնվեց մի հետաքրքիր գործ։ Փախարաս գիւղի բնակիչները մեղադրում էին արիւնուռեցի Հաջի Շարիֆ-օղլուն վաշխառութեան մէջ։ Ինչութեան օրը մեր գիւղի փողոցներում վխտում էր թուրքերի մի ահագին բազմութիւն։ Ոմանք խմբվելով մի տեղ՝ բարձրաձայն խօսում, վիճում, իրար «ուեխ էին կրծում», ոմանք էլ քաշվելով և առանձնանալով մի «խովլաթ անկիւն»՝ ինչ որ գաղտնի բաներ էին փսփսում միմեանց ականջին այնքան զգուշաւորութեամբ, որ չիցէ թէ շուրջը կողմնակի լսողներ լինեն։ Եւ հետաքրքրութիւնից շարժված, մօտեցայ այդ խմբին և հարցրի այդքան զգուշաւոր համբրման պատճառը։ Իմ հարցին պատասխանեց մի թուրք գիւղացի, որ ինչպէս երևում էր կանչված էր այդ գործի համար։ Մեղադրվող Շարիֆ-օղլու ազգականները փղի կտաքով ատիպում էին նրան, նախկին տուած ցուցմունքների հակառակ, այժմ շուտ տալ խօսքը ի նպաստ մեղադրվողի. նոյն ձևով միջոցներ էին ձեռք առնում այդ «բարի հաշտարար միջնորդները» համոզելու և համաձայնութեան բերելու և միւս բոլոր վկաներին՝ մեղմացնելու իրանց մեղադրանքները օրէնքի առաջ և Շարիֆ-օղլուն ազատելու պատժից։ Իսկ բուն քարոզիչներին արդէն զանազան «բախշիշներ» խոստանալով ազդեցրել էին շուտ բերել։ Առաջ է՝ «կաշառքը մութ տեղը լիս կը տայ, գժոխքի դռները բաց կանի»։ Այդ կաշառքի շնորհիւ էր, որ վկաները այլ կերպ ծամծմեցին իրանց խօսքերը և հնարաւորութիւն տուին օրէնքին թեթև վճիռ կայացնելու։ Շարիֆ օղլու և փախարալուցի Մամադ Սեյֆիի դէմ։ Վերջինս մեղադրվեց այն բանի համար, որ առասպելական տոկոսներով տարածողն է եղել առաջինի, իբրև հարուստ «չուվարի» զինգզնգան ոսկիներն ու արծաթները Բօրչալուի թուրք ազգաբնակութեան խաւերում։ Այդ երկուսի վաշխառուական անխղճութիւնը այն կէտին է հասած և. զել, որ ինչ որ այլ «երևակայական—մտածածին» տոկոսների հաշում խարելով շահագործել են խաւարամիտ գիւղացիներին, նրանց սայլերով փայտ և ճախ կրել տալով, և տան, դաշտային աշխատանքներում մշակի պէս բանեցնելով իրանց օգտին, բացի և այն, որ թումանին 50 կ., մինչև անգամ 1 բուբլի շահ են առել. երբեմն պատահել է դէպք՝ վճարը լիովին ստացել են, նորից շուտ են եկել, գանգատվել. «բարաթ-սանաթին» ներկայացրել դատարան, նորից վճարել տուել և թշուառ գիւղացիներից ստացել կրկնակի։ Զը նայած այս տիսուր հանգամանքներին՝ կաշառքի շնորհիւ վկաները և բոլոր ազդեցիները ապնիւ գտնվեցին, յեղաշրջելով ցուցմունքների իսկութիւնը, որի հիման վրա օրէնքը յիշեալ երկուսին վճռեց չորս ամիս բանտարկութիւն, ամեն իրաւունքներից զրկելով։

Գ. Բաբանեան

ՍՊԱՍԱՎՈՂ ԱՄԵՆԻՍՏԻԱՆ

Մինչ Ռուսաստանի ամբողջ թէ մայրաքաղաքների և թէ գաւառական մամուլը անհամբերութեամբ ու սրտի թրթռոցով սպասում է սպասում քաղաքական յանցաւորների համար, ստամբիսանական դեպարտամենտի գլխավոր Վուչէը, ինչպէս լրագիրները հաղորդեցին, կարգադրել է, որ այսուհետև այլ ևս դրամական կամ այլ երաշխաւորութեամբ մինչև գործի քննութեան վերջանալը բանտից չարձակեն քաղաքական յանցաւորներին։

Ինչպէս յայտնի է, մինչև օրս քաղաքական յանցաւորի անուան տակ ձերբակալվածներից շատ քչերն էին թոյլ տալիս երաշխաւորութեամբ բանից դուրս գալու, այժմ, այդ նոր կարգադրութեամբ, այդ քչերն էլ են զրկվում արևի լոյսից։

Եւ այդ մօնոպոլական կարգադրութիւնը արված է այն հիման վրա, թէ իբր բանից արձակվածները խանգարում են գործի քննութիւնը շիտակութեամբ առաջ տանելուն։

Ի՜նչ փարիսեցական նենգութիւն։

Եւ այս բոլորը անվում են նրա համար միայն, որպէս զի բիւրօկրատական հնարաւորութիւն ունենայ, բոլորովին «օրինաւոր» եղանակով, հրապարակից մաքրել այն բոլոր անձնաւորութիւններին, որոնք անհաճելի են կառավարութեանը և կարող են այսպէս թէ այնպէս կառավարութեան միտումները խանգարել և մանաւանդ ընտրութիւնների ժամանակ հակառակորդական դեր խաղալ։

Վերոգրեալ կարգադրութեան հետևանքը այն կը լինի, որ պատահած մարդուն կը ձերբակալեն և, առանց որ և է լուրջ կամ անլուրջ պատճառի, կը փակեն բանտերում ու կը պահեն, ասելով շարունակ թէ՝ դեռ գործիդ քննութիւնը վերջացած չէ։

Իսկ յետոյ... յետոյ էլ, երբ ամեն բան կատարված կը լինի, մի մեծագոյգ «ամնիսթիա» կը հրատարակեն և այդ բոլոր անմեղ նահատակներին դուրս կը թողնեն բանտերից, ասելով՝ «գնացէք և աղօթեցէք Վիտէ-Դուբնօվօի արեշատութեան համար»։

Ո՜րքան սրտաշարժ տեսարան է, այնպէս չէ։

Սակայն մի կարծէք թէ մենք կատակ ենք անում, իսկապէս որ Վիտէ-Դուբնօվօի արեշատութեան համար աղօթողներ շատ պիտի լինեն, երբ սպասած ամնիստիան հրատարակվի։ Միայն թէ աղօթողները ոչ թէ բանտերից դուրս եկածներն ու աքսորավայրերից վերադարձողները կը լինեն, այլ այն իսկապէս չարագործներն ու յանցաւորները, որոնք դեռ նոր բանտերը պիտի մտնեն, երբ իսկական Պետական Դուման և Ժողովրդային դատաստանը հաստատվի։ Իսկ զանց թիւը լեգիոն է, որոնց մէջ մտնում են Պօտա-Արտուրը, Մուկդէնի, Յուսիմայի, Օգեսսայի, Լենսատանի, Լիտվայի, Խարանդիայի, Սեատաօլցի և այլն և այլն շատ տեղերի հերոսները։

Հաւատացած ենք, որ իսկապէս հէնց դրանց համար է մենիստրութեան մէջ մշակվում այն ամնիստիան, որի մասին այնչափ շատ են գրվում վերջերս մայրաքաղաքի թերթերը։

Ինչ վերաբերում է այն հասարակ մահկանացուներին, որոնք զանազան քաղաքական կուսակցութիւնների ակնաւոր գործիչներն են համարվում, նրանց փորձանքից ազատ մնալու համար, Վիտէ-Դուբնօվօն մի շատ հասարակ և փորձված միջոց գիտեն արդէն. մեծագոյգ ամնիստիան շնորհով մանիֆէստի հրատարակութիւնից անմիջապէս յետոյ, լոյս կընծայվեն այդ մանիֆէստը բացատրող շրջաբերականներ, որոնց իսկական իմաստի համաձայն կարելի կը լինի դարձեալ հաղորդակը մարդիկ ուղարկել այն աքսորավայրերը, որտեղից մի ամիս առաջ, «մանիֆէստի իմաստը լաւ չըմբռնելու պատճառով», ազատել և վերադարձրել էին նրանց։

Ամնիստիա ու բացատրական շրջաբերական հրատարակելու սիստեմը շատ աջող հնարանք է եղել Վիտէ-Դուբնօվօի արեշատութեան համար աղօթողներ շատ պիտի լինեն, երբ սպասած ամնիստիան հրատարակվի։ Միայն թէ աղօթողները ոչ թէ բանտերից դուրս եկածներն ու աքսորավայրերից վերադարձողները կը լինեն, այլ այն իսկապէս չարագործներն ու յանցաւորները, որոնք դեռ նոր բանտերը պիտի մտնեն, երբ իսկական Պետական Դուման և Ժողովրդային դատաստանը հաստատվի։ Իսկ զանց թիւը լեգիոն է, որոնց մէջ մտնում են Պօտա-Արտուրը, Մուկդէնի, Յուսիմայի, Օգեսսայի, Լենսատանի, Լիտվայի, Խարանդիայի, Սեատաօլցի և այլն և այլն շատ տեղերի հերոսները։

Հաւատացած ենք, որ իսկապէս հէնց դրանց համար է մենիստրութեան մէջ մշակվում այն ամնիստիան, որի մասին այնչափ շատ են գրվում վերջերս մայրաքաղաքի թերթերը։

Ինչ վերաբերում է այն հասարակ մահկանացուներին, որոնք զանազան քաղաքական կուսակցութիւնների ակնաւոր գործիչներն են համարվում, նրանց փորձանքից ազատ մնալու համար, Վիտէ-Դուբնօվօն մի շատ հասարակ և փորձված միջոց գիտեն արդէն. մեծագոյգ ամնիստիան շնորհով մանիֆէստի հրատարակութիւնից անմիջապէս յետոյ, լոյս կընծայվեն այդ մանիֆէստը բացատրող շրջաբերականներ, որոնց իսկական իմաստի համաձայն կարելի կը լինի դարձեալ հաղորդակը մարդիկ ուղարկել այն աքսորավայրերը, որտեղից մի ամիս առաջ, «մանիֆէստի իմաստը լաւ չըմբռնելու պատճառով», ազատել և վերադարձրել էին նրանց։

Ամնիստիա ու բացատրական շրջաբերական հրատարակելու սիստեմը շատ աջող հնարանք է եղել Վիտէ-Դուբնօվօի արեշատութեան համար։ Ինչութեան օրը մեր գիւղի փողոցներում վխտում էր թուրքերի մի ահագին բազմութիւն։ Ոմանք խմբվելով մի տեղ՝ բարձրաձայն խօսում, վիճում, իրար «ուեխ էին կրծում», ոմանք էլ քաշվելով և առանձնանալով մի «խովլաթ անկիւն»՝ ինչ որ գաղտնի բաներ էին փսփսում միմեանց ականջին այնքան զգուշաւորութեամբ, որ չիցէ թէ շուրջը կողմնակի լսողներ լինեն։ Եւ հետաքրքրութիւնից շարժված, մօտեցայ այդ խմբին և հարցրի այդքան զգուշաւոր համբրման պատճառը։ Իմ հարցին պատասխանեց մի թուրք գիւղացի, որ ինչպէս երևում էր կանչված էր այդ գործի համար։ Մեղադրվող Շարիֆ-օղլու ազգականները փղի կտաքով

էր Բիսմարկը, որը առաջին անգամ հնարեց հռչակաւոր ընտրողական քարտէզը, բայց մեզ ծանօթ բոլոր միջոցներից և ոչ մէկը այն ատտիճան թափանցիկ չէ ու աչք ծակելու ատտիճան չէ մատնում իր հակառակն ու խարդախ լինելը, ինչպէսին են պ. Դուբնօվօի հնարած միջոցները։ Երևի պ. մինիստրը Ռուսաստանի ժողովրդին այն ատտիճան ոտքէ ի գլուխ դատում, որ կարծում է, թէ այդ օյնբազութիւնները ոչ ոք չէ հասկանայ, կամ գուցէ, որ աւելի հանանական է նա խելի ժողովրդի հասկանալու կամ չը հասկանալու մասին հոգ էլ չէ տանում, միայն թէ ինքը իր նպատակին հասած լինի, այն է՝ թէ Գեսական Դուման ունենայ Ռուսաստանը և թէ միապետութիւնը և բիւրօկրատիան իր ամբողջ ոյժով մնան անսասան։

Ռ.

ԻՇԽԱՆ Կ. ԱՐԴԱՐԻԹԵԱՆ

«Մշակի» նախորդ համարներից մէկում մենք հաղորդել էինք իբրև լուր, որ մտադրութիւն կայ Վարշավայի բէլական դպրոցի դիրեկտօր իշխ. Կ. Արդարիթեան-Երկայնաբազուկին կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու նշանակել և տուինք նրա գործունէութեան համառօտ տեղեկագիրը։ Մի կողմ թողնելով այն հարցը, թէ որքան հաւանականութիւն ունի այդ լուրը կամ անհաւանականութիւն, մանաւանդ որ «Тиф. Лис.»-ի վարժամ յայտնութեամբ այդ չէ ճշտվում, մենք այնու ամենայնիւ աւելորդ չենք համարում հաղորդել մեր ընթերցողներին այն տեղեկութիւնները, որ ստացել ենք Վարշավայից նրա հայեացքների մասին դէպի կովկասեան ուսումնարանական գործը և ազգութիւնների յարաբերութիւնները։ Նա անպայման կուսակից է գաղրցական ինքնավարութեան և ջերմ երկրպագու կովկասեան բոլոր ազգութիւնների միաբան, համերաշխ ու խաղաղ ստեղծագործական աշխատութեան յօգուտ ամբողջ Կովկասի։ Իբրև մանկավարժ՝ այն որոշ համոզմունքն ունի, որ գպրոցը, որպէս կրթական մի հասարակութիւն, պէտք է բաղադրվի ընտանիքի հետ միասին ձեռքձեռքի տուած։ Նա ջերմ սիրում է մանկավարժական գործունէութիւնը և, սակայն նրա պաշտօնական ընկերները, հիանալի ոգեմիխարաւոր է, որի շնորհիւ նա մեծ յարգանք է վայելում Վարշավայում թէ ռուսների և թէ լեհացիների կողմից։ Նա միշտ տոգորված է եղել իր հայրենի Կովկասին ծառայելու, նրա լուսաւորութեան գործին նուիրվելու ջերմ փափագով։ Եւ այժմս, գուցէ հէնց այդ սէրը զրդէր նրան յանձն առնել իրան առաջարկված այդ պաշտօնը, եթէ վտանգ լինէր տեղական տարբերի ու հասարակական գիտակից ոյժերի միահամուռ աջակցութեան վրա, առանց որոնց նա չի ուզենայ յանձն առնել այդ պաշտօնը։ Ազգութիւն, սահմանափակ մտքով, նա չէ ընդունում և ճանաչում է մի ընդհանուր Կովկաս միայն, իբրև մի ընտանիք իր բազմալեզու անդամներով, և իւրաքանչիւրի զարգացմանը նպաստել անխարիր կերպով—այդ նրա դէվիզն է։ Ահա այդ տեսակէտից նրա նշանակելը միանգամայն ցանկալի է և կանված է միմիայն կովկասեան Փոխարքայի համաձայնութիւնից։

ՀԱՅԱՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ

Ներքին գործերի մինիստրը մի նոր շրջաբերականով բացատրում է, թէ օրէնքը «ծառայողներին» թոյլ չէ տալիս աշխատանքները ընդմիջել ընտրութիւնների պատճառով։ Մի այդպիսի շրջաբերական էլ առանձնապէս ուղարկված է երկաթուղային վարչութիւններին։

Արդեօք ո՞ւմ պէտք է հասկանալ «ծառայողներ» բառի տակ. դա մի այնպիսի առաձգական խօսք է, որ կարող է և բանտրներին վերաբերվիր։ Ուրեմն եթէ գործաւորները կամ կառավարիչները ցանկանան բանտրներին քուէարկութեան իրաւունքից զրկել, նը. բանք շատ հեշտութեամբ կարող են մինիստրի այդ շրջաբերական վրա յենվել և թոյլ չը տալ, որ բանտրները իրանց գործը թողած ընտրութիւնները քուէարկու գնան։ Մանաւանդ որ ընտրութիւնները կիրակի կամ ասն օրերին խօ չեն միշտ նշանակվում։ Եւ միթէ չէ՞ կարելի ենթադրել, որ այդպիսի շրջաբերական ուղարկողը և գաղտնի հրանդներ էլ չի ուզիլի որոշ տեղ, որպէսզի ընտրութիւնները լի օրերում նշանակվեն։ Եթէ նոյն իսկ այդպիսի հրանդներ էլ չը լինեն, դարձեալ այդ մինիստրական շրջաբերականը մեծ դեր կարող է խաղալ այս ու այն իշխանութեան ձեռքում, մանաւանդ որ հիմա ամեն մի գեներալ-նահանգապետ մի մի ինքնիշխան թագաւորներ են ներկայանում իրանց շրջանում։ Եւ ինչու անպատճառ գեներալ-նահանգապետները. միթէ զանազան խուլ անկիւնների համար ամեն մի գաւառապետ նոյն ինքնիշխան թագաւորը չէ՞ իր գաւառում։

Ահա այդպիսի անկիւններում, որտեղ հասարեա թէ հասարակական կօնտրոլ չը կայ և որտեղից բողոքի ձայները ամբողջ ամիսների ընթացքում էլ տեղ չեն հասնում, կըրկնում եմ, այդպիսի անկիւններում բաւական է որ իշխանութիւնը ընտրութիւնը լի օր նը. շանակէ և որա ու նրա ականջին փսփսայ շրջաբերականի բացատրութիւնը իր ուզած իմաստով, և ահա բոլոր բանտրները, բոլոր առաջադիմական տարբերը կը զրկվեն քուէարկութեան իրաւունքից։

Տեսէք թէ որքան հասարակական գրութիւն է ստեղծել պ. Դուբնօվօն. մի կողմից պատռտում ու հալածում են Պետական Դումայի ընտրութիւնները բօյկոտ անողներին, իսկ միւս կողմից ծուռ ու մուռ միջոցներ են հը. նարում, որպէսզի կառավարութեան անհաճոյ տարբերը զրկվեն ընտրութիւններին մասնակցելուց։ Այդ խօսքերով՝ այն տեղերում, որտեղ բօյկոտը կառավարութեան համար անյարմար բան է, բօյկոտ քարոզողներին կը ձերբակալեն, կը դատեն ու կը պատժեն. իսկ այն տեղերում, որտեղ կառավարութիւնը բօյկոտ է նարկաւոր, նա այդ կը կարգադրէ առանց ապիտատօրների, շրջաբերականների զօրութեամբ։

Եւրոպական երկրներում շատ ու շատ ծուռ ու մուռ միջոցներ են գործադրվել ժողովրդի առաջադէմ տարբերին, մանաւանդ բանտրներին քուէարկութեան իրաւունքից զրկելու համար. այդ բանի մէջ մանաւանդ վարպետ

կայսրութիւնը և ամբողջ քրիստոնէութեան համար ծանր արհաւիրքից վերջ ի վերջոյ՝ դարձրեց նրան «հիւանդ մարդ»։

Մանաւորապէս Կովկասում ոչ ոք չէ կարող յիշել մի դէպք, որ Ռուսաստանը յետ նահանջած լինէր։ Ռուսաստանը անդադար հարուածում էր պարսիկներին և թուրքերին, վերցնում էր հեռվեռէ այնպիսի անմատչելի ամրութիւններ, ինչպէս Դարբը, և անընդհատ երկարատև պատերազմներով աւերեց այն լեռնականների ամպերի մէջ թաղնված ըները, որոնք հպարտ էին մի ժամանակ և անյաղթելի ինչպէս արծիւներ։ Իսլամի վրա արդարև սարսափ էր ազդված։ Ծանր վիրաւորանքը և ատելութիւնը դէպի նուաճողը, իսկ առաւել ևս դէպի գեավուրը, հարկադրված էր խոնարհվելու անդրդվելի, ինչպէս ինքը ճակատագիրը, ոյժի հմայքի առաջ։ Մուսուլմանները ֆատալիստներ են։ Ռուսաստանի անընդհատ յաղթութիւնները հարկադրում էին նայել նրա վրա, որպէս Ալլահի կամքը կատարողի։ Սնունդապաշտական յարգանքը դէպի ոյժը կըրկնապատկվում, հիացմունքի էր հանում քաջագործութեան առաջ, որը այնքան յատուկ է Մարգարէի զաւակներին։ Մի խօսքով Ռուսաստանի վարկը Իսլամի ամբողջ աշխարհում—նամանաւանդ մերձաւոր Ասիայում,—չափազանց բարձր էր կանգնած և աւելի մեծ արժէք ունէր սահմանի վրա անգլին քանակ պատրաստ պահելու։ «Անգլիացին խորամանկ է, իսկ ռուսը զօրեղ», գարձել է առած, ճիշտ այնպէս, ինչպէս որ Արևմուտքում էր կարմվել մի ժամանակ թիւրքական հզօրութեան տարիշրջանում՝ «Fort comme le Ture»։ Ռուսաստանի զինուորական վարկը նրա ամենաթանգագին ժառանգութիւնն էր, բայց եապօնական պատերազմը նրան խորտակեց։ Դուք, ապրելով Պետերբուրգում, նոյն իսկ հեռուը գաղափար անգամ չունէք այն բարոյական յեղաշրջումի մասին, որը առաջ բերեց Մուքդենը Արևելքում՝ Ռուսաստանի թոյլատակ պարտութիւնը Հեռաւոր Արևելքում։ Դեռ ևս պատերազմի սկզբում մահմեդականները անպայման հաւատացած էին, որ Ռուսաստանը կը ջարդէ եապօնացիներին։ Ոչ մի հասկացողութիւն չունենալով եապօնացիների մասին, թաթարները, պարսիկները, թիւրքերը, լեռնականները նոյն իսկ չէին էլ կարծում, որ Արևելքում կը գտնվէր մի ոյժ, որ ընդունակ լիներ չափել իր ուժերը Ռուսաստանի հետ։ Եւ յանկարծ լուրեր են ստացվում պարտութիւնների մասին՝ առաջին, երկրորդ, երրորդ—և այդպէս անվերջ։

Անձնատուր եղաւ Պօրտ-Արտուրը, Ջարդ ու փշուր է եղել Սկօբելեվի օգնական և զինուորական մինիստր Կուրօպատկին, Ջրասոյզ է արվել ծովի մէջ ռուսաց ամբողջ նաւատորմը։ Եւ այդ ամենը արեց ամենահեռաւոր երկրի կռապաշտ ու հեթանոս ժողովուրդը։ Մի կարծէք, որ Մերձաւոր Արևելքը այնքան փակ ու առանձնացած է, որ լուրերը այնտեղ չեն հասնում։ Այդ լուրերը, երբ հետաքրքիր են, հոգի արագութեամբ են տարածվում, սաստիկ չափազանցացրած, լեգենդների փոխվելով։ Թէ Թիւրքիայում, թէ Պարսկաստանում և մեր Անդրկովկասում լրագիրներ են հրատարակվում, պօստը և հեռագիրը մուռք են գործում ամենայետ ընկած անկիւնները, վերջապէս անգլիացիները և խպանացիները խնամքով հոգ էին տարել, որպէսզի Ասիան տեղեկութիւն կարողանար ստանալ Ռուսաստանի կրած ձախորդութիւնների, պարտութիւնների մասին։ Թիւրքիա և Պարսկաստան էին գալիս եապօնական գործակալները, չէ կարելի երաշխաւորել, որ նրանք մուռք չեն գործել և Կովկաս, մանաւանդ, որ նրանք պատերազմից առաջ լրտեսել էին ամբողջ Ռուսաստանը։ Այժմ երևակայեցէք ռուսաց սառոցացման ոլորտնդոստ տպաւորութիւնը։ Մարդիկ չէին հաւատում իրանց աչքերին ու ականջներին, բայց երբ արդէն անտարակոյս ակնայայտի իրողութիւն դարձաւ, երևակայեցէք ինչ թնդմամբ պէտք է մարդկանց մտքերի մէջ վայր ընկնէր այն հեղինակութիւնը, որ այնքան անվիճելի ու անեղ էր։ Պօրտսմուտի ամօթալի խաղաղութեան գաշնքը թոյլ տալուց Իսլամին լիապատ կրծքով ազատ շունչ քաշել։ Նրա ժառանգական, ամենահեղ թշնամուն վտանգաւոր, գուցէ և մահացու խոր վէրք էր հասցրված։ Միանգամից սկսեցին շարժվել ճնշված յոյսերը։ Դեռ ևս պատերազմի ժամանակ Թիւրքական հայրենասէրները—ի հարկէ, իրանց կառավարութեան եռանդուն աջակցութեամբ—ուղարկում էին իրանց էմիսարներին Անդրկովկաս։ Դեռ պատերազմի ժամանակ Անդրկովկասի և Թիւրքական մի քանի սահմանակից վիլայէթներում խլրտումներ սրգէն սկսվել էին։ Որպէս զի համոզվէք որ դա ևս չեմ հնարել,—կարդացէք «Сынъ Отечества» թերթի անցած տարվայ նոյեմբերի համարներում։ Պօլսից ստացված թղթակցութիւնները։ Այդ թղթակցութիւնների մէջ առաջ են բերված քաղուածքներ Թիւրքական էմիսարների գաղտնի զեկուցումներից, որոնց նպատակն էր ոռքի կանգնեցնել Անդրկովկասի մուսուլման ազգաբնակութիւնը, մի շարք խորամանկ ձևերով մոլորութեան մէջ պահելով ռուսաց պարզամիտ և ծոյլ ադմինիստրացիային։ Հարկաւոր է ձեզ ասել, որ բացի «համիսլամութիւնից», որ արդէն նոր չէ, համեմատաբար աւելի մօտ ժամանակներում ծնունդ է տուել «համթիւրքութիւն» ուսմունքը, որ շատ քիչ է յայտնի Ռուսաստանում, բայց Ղրիմ հետաքրքիր ունի Արևելքում։ Համթիւրքութիւնը ձգտում է միացնել թիւրքական բոլոր ցեղերը, որոնք ցրված են անսահման տարածութեան վրա՝ սկսած Եգիպտոսից մինչև Զինական պարիսպները։ Ցայսմանէ է, որ բոլոր այդ ցեղերը մինչև այժմ խօսում են իրար շատ նման հասկանալի բարբառներով։ Նրանք, որոնց դուք ռուսներդ թաթար եք անուանում, մի առանձին ցեղ չեն ներկայացնում, այլ մի և նոյն թիւրքերն են, որ ապրում են Թիւրքիայում, թէ իրանց կրօնով և, որ գլխաւորն է, լեզուով։ Այն, ինչ որ ձեր պատմութեան մէջ կոչվում է թաթարական արշաւանք, իսկապէս մի և նոյն թաթարական արշաւանքն է, և թաթարական լուծը նոյն թիւրքական լուծն է։ «Թաթար» անունը, որ պատկանում է թաթար ցեղին, դուք վերագրել եք բոլոր արևելեան թիւրքերին, բայց իրողութիւնը այն է, որ բոլոր թիւրքերը՝ թուրքեր են։ Ոչ միայն Ղրիմի, այլ և անդրկովկասեան թաթարները իրանց թաթար չեն անուանում. այդ անունը նրանք վիրաւորական են համարում, այլ իրանց թիւրք են անուանում։ Այդ անվիճելի տեսակէտից մեր ամբողջ Անդրկովկասը, բացի Վրաստանից, բուն թիւրքիայի մի մասն է կազմում, որ անցել է Ռուսաստանի ձեռքը զէնքի ոյժով։ Դուք հիւսիսային բևեռի շրջանում գտնվելով, ի զուր էք կարծում, որ Աբեւելքը մինչև այժմ էլ դեռ քնած է, ինչպէս որ մինչև Ղրիմի պատերազմն էր։ Թիւրքիայում, Պարսկաստանում և մեզանում, Անդրկովկասում, մուսուլմանութիւնը այլևս ամենևին այն չէ, ինչ որ առաջ էր։ Այնպիսի իրադեպեր, ինչպէս համթիւրքութիւնը, առհասարակ դիւրըմբռնելի են,—բայց արդէն բազմաթիւ է մուսուլման ինտելիգենցիան, որը ոգեւորված է նրանով և ընդունակ է մոլեռանդութեամբ գործելու նրանց համար։ Իսկ անգլիացիները և գերմանացիները ի հարկ է միշտ պատրաստ են աջակցութիւն ցոյց տալ այն բոլոր բաներում, որոնք ի վնաս Ռուսաստանի են։ Որպէս զի հեռացնէ ուշադրութիւնը այն պղտոտած գարկերակից, որի շնորհիւ պէտք է հոսէ դէպի Սիբիր գերմանական գաղթականութիւնը,—կարելի է ստեղծել թիւրքերի համար արհեստական կոմպլենացիաներ ի հաշիւ թուլացած Ռուսաստանի։ Անդրկովկասը, Թիւրքիայի հետ ունի մի կրօն և մի և նոյն լեզուն,—Իտալիայի չափ իր մեծութեամբ, իր հարստութեամբ մի աքսելի երկիր է, ճոխ անթիւ բնական հարստութիւններով։ Միմիայն նաւթը ոչքան արժէ։ Հարկաւոր է մի հայեացք միայն ձգել քարտէզի վրա, որպէսզի նոյնվի մի իդեալական սահման է կազմում Թիւրքիայի համար, ինչպէս որ Պիրենեան Իսպանիայի համար։ Բաւական է միայն ամրացնել կիրճերը, լեռների անցքերը, և Թիւրքիան ապահով է ռուսական յարձակումներից։ Մինչ դուք կարծում էք, որ Թիւրքիի մէջ ազգասէրներ ամենևին չը կան։ Իսկ եթէ նրանք կան, ապա ուրեմն Անդրկովկասի նուաճումը՝ աւելի գրաւիչ իդէ է, քան թէ Ռուսաստանի համար Մանջուրիան իւրացնելը։ Եւ ապա Ռուսաստանի այդ սարսափելի պարտութիւնը նրանց բաղձանքները հետզհետէ իրականանում են։

—Մինչ դուք կարծում էք, որ Թիւրքիան համարձակութիւն կունենայ այդ անելու։ Կը վատահանամ կռիւ յայտարարել Ռուսաստանին։ Եւ ինչու ոչ։ Դուք հէնց շարունակ պնդում էիք, որ Եապօնիան չի վատահանայ կռիւ յայտարարել, մինչդեռ նա համարձակվեց էլ, յայտարարեց էլ Թիւրքիան, ի հարկէ, մեն մենակ ու իսկոյն յաղթակում չի գործի։ Թիւրքիան շատ լաւ գիտէ՝ թէ ինչ ոյժ է նա։ Նրանք, եապօնացիների նման կը սպասեն յարմար ժամանակի, զանգնեներ կը կապեն, իսկ որ գլխաւորն է՝ նախապէս կը պատրաստեն պատերազմական բեմը։ Ինչ վերաբերում է ժամանակին, պարզ է, որ պարնից աւելի յարմար ժաման

վութիւնները բացատրում էք բացառապէս կրօնական և քաղաքական պատճառներով, բայց արդեօք, չը կան ուրիշ, տնտեսական պատճառներ։ Իսլամականները միշտ առհզօր պատճառներ չեն կարող անտարբեր կերպով նայել, տեսնել թէ ինչպէս իրանց կայքը ատիճանաբար անցնում է հայերի ձեռքը, ինչպէս նրանք գրաւում են շուկաները, հասարակական հաստատութիւնները և այլն։ Բայց թէկուզ արած։ Հայերը վերցնում են այն, ինչ որ տալիս են նրանց, և եթէ դա յանցանք է, ապա ուրեմն նոյնպիսի բանի մէջ մեղաւոր պէտք է համարել և անգլիացիներին և ամերիկացիներին և գերմանացիներին ու ֆրանսիացիներին, որովհետև այդ բոլոր ազգերն էլ ձեռնարկուներ են, և հարստանում են շուայլող ու սպառող ազգերի հաշուով։ Չը բացառելով ատելութեան այդ աղբիւրը, որով մենք կարող ենք պարծենալ միայն,—ես այնու ամենայնիւ պէտք ասեմ, որ դա ամենեին առաջնակարգ պատճառը չէ ներկայ կոտորածի մէջ։ Չէ որ հայերի մրցութիւնը (կօնկուրենցիան) առաջ էլ կար, բայց և այնպէս կոտորած չէր լինում։ Մինչև իշխան Գօլիցինը և ներկայ ազմինիստրացիան մենք թուրքերի հետ այնքան էլ վատ չէինք ապրում։ Որովհետև նրանք, թուրքերը, մեր հին տարեցաղներն են, ուստի նրանք դէպի մէջ շարունակում էին վերաբերվել արհամարհանքով, որպէս իրանց նախկին տարեցների վրա։ Որովհետև մենք քրիստոնեաներ էինք, ուստի արհամարհանքը շարունակվում էր մնալ, ինչպէս գեաուրների դէմ։ Եւ որովհետև մենք անօգնական ենք նրանց մէջ, մոռացված քրիստոնեաներ, ուստի Ռուսաստանի հասցած խորտակիչ հարուածների փոխարէն աշխատում էին մեզանից վրէժսուռ լինել, թոյնը մեզ վրա թափել։ Բայց, չը նայելով այդ բոլորին, այնու ամենայնիւ մեր յարաբերութիւնները վատ չէին։ Ալէքսանդր II կայսեր և մեծ իշխան Միխայիլ Նիկոլայևիչի ժամանակ երկիրը այն ատիճան խաղաղացված էր, որ մինչև անգամ աւազակութիւնները համարեա այլ ևս չը կային։ Եթէ ատիճանաբար աւազակութիւնները զարգացան և յետոյ բացարձակ կոտորած առացրին, որը վերջ է վերջոյ հրեան գարձաւ, սպառնալով Թիւրքաստի միջամտութիւն առաջ բերել, դրա միակ պատճառը՝ կովկասեան իշխանաւորների անմիտ քաղաքականութիւնն է։ Փոխանակ թոյլ չը տալու կասկածի տեղիք կայսերական իշխանութեան ամենակարողութեան վրա, փոխանակ ճնշելու տեղական ազդեցութիւնների վրա գերիշխող դեր խաղալու նրանք կատարվող ամէն փորձերը, բռնութիւնները, իրաւունքի խախտումը,—տեղական իշխանութիւնները ընդհակառակը սկսեցին խաղալ ժողովրդական կրքերի հետ, մի ազդեցութիւնը գրաւել միւսներին հալածել, մէկին յոյսեր տալ, միւսին՝ թշուառացնել, և այդ քրտ տալու, կուլեցնելու հետևանքը այն եղաւ, որ այդ ահագին զանգուածը, որ ներկայացնում է իրանով Կովկասը, զրգռեցին ու կատաղութեան հասցրին...

(Կը շարունակվի)

ՊԱՏԱՍԽԱՆ ԳԵՏԱՐԷԳԻ ԴՈՐԾԱՆԱՆԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԱԳՈՒՉՖ ԷՐՆԻՆ

«Մշակի» № 25-ի մէջ տպագրված էր Գետաբէգի գործարանի կառավարիչ Ագուլֆ Էրնի բացատրութիւնը։ Այդ ատիթով անհրաժեշտ եմ համարում հաղորդել իմ գիտեցածը Գետաբէգի գէպքերի մասին։

Դէպքերը եղել են այսպէս։ Նոյեմբերի 18-ին Գանձակի խառնակութեան լուրը հասնում է Դալար թէ չէ, այսպէսի հայի երկու խառնութիւնն իսկոյն և եթ թալանվում են Սուլթան-բեկի առաջնորդութեամբ, յետոյ գերմանական գաղութում եղած հայի խառնութիւնը։ Նոյն օրն և եթ թուրքերը աւերեցին Բաղաճորի Ճառչի և Բիմանդար գիւղերը նոյնպէս և Մեծ գիւղը։ Դրանից յետոյ թուրքերը թալանեցին Սլավեանկի հայի խառնութիւնը, ուս պլիսաւի ոչնտեղեղած ժամանակ, որը նոր էր եկել ընդունելու իր գաւառամասը։ Պրիսաւը այնտեղից գընում է Գետաբէգ և հայերին յայտնում, որ թուրքերի մեծ ամբոխ գալիս է կողոպտելու Գետաբէգը։ Գետաբէգցիները ընտրում են լինը պաշտամաւոր, 7 հոգի թուրքերից, 2-ը հայերից, որ գնան ամբոխի առաջն առնեն։ Թուրքերը գալով մինչև Սլավեանկա ուս գիւղը, այդտեղ հայերին խորհուրդ են տալիս դնալ Զարդախլու։ այն պատճառանութեամբ թէ իրանց հետ անյարմար է հայերի գնալը ամբոխի առաջ, որովհետև թուրքերը կարող են վնասել հայերին։

Վերջինիս հաւատալով գալիս են Զարդախլու, իսկ թուրքերը այդտեղից վերադառնում են Գետաբէգ։

Հենց այդ օրը երեկոյեան սկսում են. այսպէս առաջինը կեանկեառեցի Եաղուբ-աղի տղին Մէհրալին գալիս է Գասպար Բաղդասարեանի տունը, որը իր մտերիմ ծանօթն է եղել։ Դրա տանը հաց է ուտում և թէյ խըմում։ Բաղդասարեանը խնդրում է պաշպանել թէ իրան և թէ իր ընտանիքը։ Նա խոստանում է և խնդրում է փրկանք տալ իրան 25 ռուբլի փող, և այնուհետև հրացանը։ Բաղդասարեանը կատարում է քիրվա Մեհրալու պահանջը, տալիս է 25 ր. և հրացանը։ Լաւ ուտելուց և խմելուց յետոյ, Մեհրալին դուրս է գալիս հրացանը ձեռքին, և ներքևից կանչում է Գասպար Բաղդասարեանին։ երբ վերջինս լուսամուտով գլուխը հանում է, Մեհրալին նոյն բօպէին նրա ընծայած հրացանով գնդակահար է անում նրան իր ընտանիքի և երեխաների առաջ, յետոյ մտնում է տուն և մնացածներին բոլորին կոտորում, բացի միակ երեխայից, որը մնում է օրօրոցի մէջ կապած։ Նրան էլ տանում է իբր որդեգիր։ Տունը կողոպտելուց յետոյ, վառում են նոյն Գասպարեանի տունը, ուր այրվում են ընտանիքի բոլոր անդամների դիակները։ Այս եղելութիւնը մեզ պատմեց Բաղդասարեանի 25 տարեկան եղբայրը, Նիկոլը, որը նոր էր վերադարձել զինուորութիւնից։

Գնդակը դիպել էր նրան մէջքից և փորից, և աղիքները դուրս թափել։ Փորից բռնած հասնում է նա Գետաբէգի հիւանդանոցը և պատմում եղելութիւնը, ու մեռնում։ Վերջինս կնոջն էլ են սպանում իր եղբօր տանը։ Դա առաջին նշանն է եղել։ Գասպարեանի հրացանի պայթումից յետոյ, այդ թաղի բոլոր ընակիչներին սկսում են կոտորել, 12 հայի տուն, որոնք ապրում էին բաղարից վերև, Հալուաբար թաղում, բոլորը խեղճ ընտանիքներ, մի քանիսը այրի կանայք իրանց որբերով։ շատերին էլ գերի են տանում—աղջկերանց 9-ը տարեկանից սկսած մինչև 16 տարեկան տարակը։ Այդտեղից աւերելով, գալիս են հասնում բաղաքը, կոտրատում հայ խանութները, որոնք ամբողջ օրը փակված են լինում, սկսում են թալանել ու յետոյ վառել։ Հայերը այդ միջոցին եղել են Ղազախլու գիւղում։ երբ լուրը հասնում է որ կողոպտեցին ու այրեցին հայ խանութները, հայ կարիճները այլ ևս համբերել չեն կարողանում, հասնում են օգնութեան՝ թէ մնացած հայերի կեանքը և թէ նրանց կայքը պաշպանելու։ Եօթ հոգով գալիս հասնում են բաղաքը, երեկոյեան ժամի 7-ին և այնտեղից սկսում են դիմադրել թուրքերին։ Հերոսաբար կուելով՝ քաջ Բէգլարը և Սարգիս Ազիէկեանը իրանց հինգ ընկերներով, թուրքերին դուրս են անում բաղաքից, դէս ու դէն խփելով հրացանի հարուածներով և ոչ թէ ռումբերի միջոցով, ինչպէս պատմում է Գետաբէգի կառավարիչը։ Թուրքերից սպանվում են մինչև 30 հոգի։ Թուրքերը փախչում են բաղարի դիմացի անտառը և ցից քարը, որտեղ նրանք լաւ գերքեր են բանում և սկսում գնդակահարել հայ քաջերին։ Սպանվում են 2 հոգի, մէկը հայ, միւսը ռուս, քննիչը։ Հայերը կրակում են թուրքերի խառնիները և թաք կացած հայերին իրանց հետ առնելով գալիս են Ղազախ գիւղը։ Գետաբէգում լաւ գիտեն, որ ոչ թէ հայերն են, սկսել թուրքերի խառնիները թալանել, այլ իրանք թուրքերը սկսել են վերին թաղից մինչև բաղարը կոտրելով, աւերելով հասնել բաղարը։ Իսկ պարոն կառավարիչը լուսաբանում է, որ հայերը կողոպտեցին պարսիկ Ալիքպարի խանութը, որ միակ խանութն էր այքի ընկնող։ Հարցնում ենք, իսկ ով թալանեց հայերի հարուստ, թանկագին խանութները։ Յայտնի է, որ մինչև 17 խանութ կար հայի և ամեն մէկը 20,000-ից աւելի կարողութիւն ունէր։ մի՞թէ հայերը կարողացան իրանց կեանքը ազատել, ուր մնաց կայքը այդ տագնապի մէջ։ Իսկ պ. դիրեկտորը ասում է, որ հայերը տարան իրանց հետ բոլոր հարստութիւնները։ որտեղից էր այդքան պատրատի փուրգոնները կանգնած, որ տանէին հայերը հարստութիւնը։ Յետոյ ինքը կառավարիչը պատմում է, որ թուրքերը տարան հայերի բոլոր իրեղէններն, փուրգոնները։ Ինչու չէ պարզը խոստովանում, որ ոչ թէ փուրգոնները տարան, այլ հենց Գետաբէգի իր պօեզներով, իսկ հայի գիակները դեռ ընկած էին փողոցներում, շատերը կիսակենդան, վերջին շունչը բերանները։ հայերի կայքը տեղափոխեցին Ղարաբուլաղ կայարանը, Ղազաքենդ և Բայրամ-աղի կայարանները, ու այնտեղից մօտակայ գիւղերը պ. Վալտերի կարգադրութեամբ։ այդ արել է պ. Վալտերը ի պատիւ թուրքերին, ինչ որ մօտակայ ռուսները մերժել են թուրքերին, թէկուզ առատ վարձով էլ լինի, մերժել են հայոց կայքը տեղափոխել թուրք գիւղերը։ Ահա այս է ճիշտը և ոչ թէ պ. կառավարչի լուսաբանութիւնը, թէ և իրան անուանում է ականատես և անկողմնապահ, մանաւանդ որ թուրքերը ոչ մի հայի ձեռքից հրացան չեն խլել և հայերը այդ օրը խառնիներն փակած իրանք փախել են Ղազախլու գիւղը և իրանց տներից դուրս չեն եկել, և ոչ մի հրացան հայոց գերեզմանատից չէ արձակվել։

Այդ բոլորը սուտ է, և կառավարիչը լուսաբանում է ուրիշների ասելով, ոյնոց ազդեցութեան տակ լինելու պատճառով չէ կարողանում արդարադատ լինել, որովհետև իրան էլ է մահ սպասում։ Խնդրում ենք կառավարչից թող լոյս հանէ այդ ականատեսների ազգանունները, միանգամայն պարզելու եղելութիւնը, որովհետև ինքը չէ ականատես եղել այդ միջոցին, ինքն իրա տան մէջ պնդ փակված է եղել, միայն լսել է գընդակի սուլոցներ, որոնք լսվում էին մթութեան մէջ, վերէ թաղում, այսինքն բաղարում, որտեղից բաւական հեռու է. այդ տեղը բարձր է, իսկ իրանք ներքին թաղումն են ապրում։ Այդ լուսաբանութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ թուրք պրիսաւ Ալիեվի և Սիլէյմանբէկի ու Մխքենլուի տանուտէրի ազդեցութեան արդիւնքը։ Կառավարիչը վերցրել է իր վրա մի ծանր դեր՝ իրանց արարքները արդարացնել։ իրանք երկիւղ ունեն, որ նոյն վիճակին կենթարկվեն, ինչպէս հայերը։

Պարզ է այն հանգամանքը, որ վերջին ժամանակներս Գետաբէգի բոլոր նեմեցիներն իրանց կանայք տեղափոխում են Թիֆլիս քաղաքը և այլ ապահով տեղեր։ Ինչպէս եկողներն իրանք պատմում են, թուրքերը այնքան լրբացել են, որ մտնում են նեմեցիների տները ու մինչև գալի մէջ նստում են, թէյ, շաքար պահանջում փէշքէշ։ տես թէ լրբութիւնը։ որտեղ է հասել, որ խաղաղ ժամանակներում նոյն իսկ խոհանոց մտնելու չէին համարձակվում, իսկ հիմա գալը նրանցն է, պատուական հիւրերնը։ բաղարը աւերելուց ու կողոպտելուց յետոյ, դաղախեցիները միւս օրը ցերեկով մնում են իրանց գիւղում, մինչև հասնում է գիշերը, և մեր ուղարկած սուրհանդակների առաջնորդութեամբ գիշերը փախչում են մեզ մօտ՝ Զարդախլու, թողնելով իրանց տան կայքը, հարստութիւնը, տաւարը, միայն իրանց հետ առնելով անկողինները, որոնց մի քանիսը ծանրութեան պատճառով շատերը թողել են կէս ճանապարհին, չը կարողանալով նրանց տանել 20 վերստ. իսկ գերմանացիների հարևան հայերը ապատանում են դիրեկտօրի տանը և կէս մասը Եկլուդի տանը, զանազան տեղերում, նկուղներում թաց կացած, որոնց հոգսը տանում է, պահպանում, պ. Էկլուդը, հացնելով նրանց համար հաց. նոյն գործարանի կառավարչի միջոցով, նրանք երկու օր ու գիշեր մնում են այդ նկուղներում։ Թուրքերը բաղարը և Ղազախլու գիւղը աւերելուց ու թալանելուց յետոյ, գալիս են կրկին գործարանը. պ. կառավարիչը կրկին խնդրում է թուրքերին, որ խնայեն մնացած հայերին, որովհետև իրանց մօտ գրաւական են. դրանք խոստանում են կառարել կառավարչի խնդիրը, և այնուհետև ուղարկում են հայերի մօտ մի անձն, որի անունը կառավարիչը չէ լուսաբանում. գնում է հայերին յայտնում, որ նրանց պէտք է տեղափոխեն ապահով տեղը, օրինակ, հայ գիւղերը՝ Բարսում, Գանձակեր։

Հայերը արտասվելով մերժում են, խընդրում են թողնել իրանց, աւելի յարմար դատելով մնալ իրանց տեղերում. բայց Վալտերը երդումով հաւատացնում է հայերին, որ նրանց ոչ մի վնասնց չէ սպասում. նոյնպէս վարվում է և պրիսաւ Ալիեվը։

Հայերին նկուղներից մէկ մէկ դուրս են բերում կառավարչի դուռը, որտեղ պէտք փոխում են, թէ պէտք է ուղարկենք Զարդախլու. իսկ մի ժամ առաջ Բարսում, Գանձակեր էին ուղարկում, իսկ հիմա Զարդախլու. այստեղ հայերն սկսում են ադի արասսոբ թափել, որ իրանք ոտով կը գնան, փուրգօն չեն ուզում, բայց չէ յարգվում խնդիրը։ Նախ հայերին զինվորի են անում պ. դիրեկտորի ընտանիքը Մուսաբէգ Ալիեվը և Վալտերը, տանելով 8 հատ բերդանկա, 3 հատ լաւ ատրճանակներ և մի քանի դաշոյններ և յանձնում են պ. կառավարչին։ հայերը իրանց հին ծանօթների, բարեկամների յոյների և ռուսների հետ արտասուելով տալիս են իրանց վերջին բարևը. յետոյ լցնում են չորս փուրգօնի մէջ մոտաւորապէս 80 հոգի, որոնցից 20 հոգի տղամարդ, մնացածը կանայք ու երեխաներ և առանց տարժշիրի ճանապարհում են նրանց. իսկ Միսկինլուի տանուտէրը Մամիզ քօխվէն, թուրք պրիսաւ Ալիեվի կարգադրութեամբ, թուրք աւազակային ամբոխը զինված պատրաստել էր ոչ հեռու գործարանից քան 100—200 սաժէն. գնում են. տանուտէր Մամէզը ձին քշում առաջ է անցնում և թուրքերին իմաց տալիս, որ գալիս են. այդ պարզ տեսնում են փախած ապատված հայերը։ Նա գդակի շարժումով թուրքերին կանչում է, իսկ Ալիեվին յետ ուղարկում. իսկոյն թուրքերը դուրս են թափում երկաթուղու և Նաֆթամարի տակից—սկսում են անխնայ կոտորել հայերին, անզէն անպաշտպան հայերին, որոնցից ապատվողները անա մեծ վկայ են գործի եղելութեանը։

Մոնը երեխայքը փախչում են կարմրէջ տակ ապատանում։ բայց ապտեղ էլ չեն ազատվում—գալիս են թուրքերը դրանց մէկ մէկ հանում և հանում բոլորի շորերը, խոստանալով որ չեն սպանի. խեղճ երեխայքը միամիտ կանգնում են, հաւատալով նրանց։ երբ բոլորին մերկացնում են, սկսում են գնդակահարել երեխանց, որոնցից մէկը 13 տարեկան, կարդանում է փախչել, ծուռ ու մուռ ճանապարհներով, հասնում է Գառնակեր։ Այդտեղից մի քանի երեխանց տանում են բաղարը. ամբոխի մէջ չորս երեխայ դարսում մէկ մէկու վրա, ու միանգամայն մոքթոտում նրանց, իսկ երկուսը ներքի թաղումն թուրք ատրամիկների և Գետաբէգի չափարների դանն են մորթում, լացնելու պակասը, յետոյ հաւաքում են բոլոր վիրաւորված կանանց և երեխանց. կենդանի մնացածներին ածում են հիւանդանոցի ներքին յարկը։ Մնում են 7 օր ու գիշեր։ Այնտեղ էլ չեն հանգստանում տալիս, շատերին գերի են վերցնում, մնացած հիւանդներին, վիրաւորներին սկսում են բռնաբարել, անխնայ ծեծելով ընդդիմանում է, վախ հայհոյանքներ ասելով հայերի հացէին, թէ թող քաղ են դան և ձեզ ազատեն մեր ճանկերից։

ՄԻՆՉԵՒ Ե՞ՐԲ ՀՈՍԷ ԿԱՐՄԻՐԸ

Մի կատարեալ տանջանոց են դարձել Թիւրքիայի հայաշատ նահանգները, մանաւանդ Մըշոյ դաշտը և Սասունը, որոնցից միշտ արիւն է հոսում. այդ կարմիր հեղեղի առջև անելը դարձել է մի անհնարին բան և որպէս մի ընական անհրաժեշտ երեւոյթ պարբերաբար միշտ կրկնվում է։

Սուլթանի ներկայ քաղաքականութիւնը աներկայ ցոյց է տալիս որ՝ օգտվելով համաշխարհային դրութիւնից, ուզում է ընջինջ անել Սասնոյ և Տարօնի հայութիւնը։ Եւ հէնց ներկայ դրութիւնը նպաստեց սուլթանին, որ սկսեց հայը ջնջելու սիստեմը ստեղծելը և իրագործումը յանձնեց մօլլաների, շէյխերի և համիդիների լեգիօններին. ինչպէս յայտնի է նախ աւերվեց Սասնոյ Շենիք գիւղը, յետոյ Ալվանէնչ, Ալիանցիք և Ալիջանը և ով գիտէ դեռ քանիներ պիտի յաջորդեն սրանց։

Ալիջան այրվեց.—1906 յունվար ամսոյն Դաշնակցութեան տեղական զինուորներից Իսմաս-գիւղի Մկրօյ և Մօսոյ անուն երիտասարդները պատահում են Մշոյ դաշտի Ալիջան գիւղը։ Այդ գիւղի բէկ Բիրիմ աղան իսկոյն խմանալով, լուր է տալիս Մուշ՝ կառավարութեան, թէ «գիւղը լեցվար է ջանֆիդանոցով»։ Եւ ինք անձամբ գնում է Մուշ։ Յաջորդ օր Մուշից ահագին քանակութեամբ զօրք է գալիս թնդանօթներով Բիրիմ աղայի առաջնորդութեամբ և գիշերով պաշարում է Ալիջան գիւղը և արշալոյսը բացվելուն պէս ամէն կողմից սկսում են գոռալ «Թեսլիմ-թեսլիմ» (անձնատուր-անձնատուր) և գիւղը ոմբակոծել թնդանօթների և հրացանների գնդակներով։ Ցերեկ երկու հերոսները տեսնելով անակնկալ դէպքը, անմիջապէս սուիծի պէս ցատկում են գերքերը քանի հատ գիւղացի քաջ երիտասարդների հետ և սկսում են հերոսաբար կռուիլ։ Հայ հերոսները անյաղթ դիմադրութիւն են ցոյց տալիս և մինչև իրանց վերջին փամփուշտը կուում են ահ ու սարսափ գցելով դիմացի վրա, որոնք 2000-ից աւել են լինում, բացի թալանառու աշիրաթներից։ Երբ աղերքի հրացանաձգութիւնը հետզհետէ նուազում է, թշնամին կամաց կամաց մօտենում է գիւղին, սատակելով յարձակումը։ Ահա այդ ատեն հայրենեկաց հարազատ որդիներ կրծքերը բաց, առանց ռազմամթերքի գերքերում նստած, ըսպասում են և ուրախ ուրախ երգում են «Մենք անկեղծ գինւոր ենք»։ Վերջապէս շատ թանգ գնով ընդունում են նահատակութեան պսակը, մանելով այն հայ նահատակաց շարքում, որոնք իրանց արեան գնով անմահացել են և անջնջելի յիշատակ են գրոշմում ամէն մի հայ սրտի։ Նահատակվում են նաև գիւղի բոլոր ընակիչները զիմադրողներով հանդերձ։ Թուրք բարբարոս զօրքը ներս է խուժում մէկ ձեռքին սուրը, միւսին հուրը, այրում և սպանում են և 240 անց բաղկացած հայ գիւղը, երբ գաղրել է դիմադրելու, մի ժամվան մէջ ոչընչացել և հողին է հաւասարվել։ Ցամին առնելով ծուխն ու մարդկանց դիակը քշում, տանում է հեռու, մարդկանց դիակներ զրկոխանն իրանց որդոց հետ թաղվում են ձեռ և այրող տների փլատակաց մէջ։ Ո՞չինչ, ոչինչ, կարծես թէ ոչինչ չէ եղել...

Թէքտաւոր

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 14-ին

Կարդալով «Մշակի» 46-րդ համարի ներքին լուրերի բաժնում տպված այն լուրը, որը վերաբերում է քաղաքիս մէջ գոյութիւն ունեցող կաւատուհիների (միջի մարդ) ապարքներին, և որի մէջ լրատուն ի միջի այլոց ակնարկում է և մի ոմն Օլ. Շ.-ին, որն իբը թէ իր ընակարանը կաւատութեան բոյն էր դարձրել և այս օրերս բռնվելով, վռնդվեց քաղաքից։ Յայտնում եմ իմ խորին գայրոյթը լրատուի դէմ, որ նա իր ակնարկած անձնաւորութեան հետ ունեցած տնտեսական հաշիւները թափում է լրագրական էջերում, չը հասկանալով խօսքի բարձր նշանակութիւնը։ Բացարձակ յայտարարում եմ, որ նրա ակնարկած Օլ. Շ.-ն ոչ կաւատութեամբ է պարապել և ոչ վռնդվել է քաղաքից։ Եթէ որ և է հաշիւ ունի, թող բարեհաճէ դալ ինձ մօտ, եթէ դարձեալ երես ունի, և ես բացատրութիւն կը տամ։

Օլ. Շ.-ն

Շուշի, մարտի 2-ին

Թոյլ տուէք «Մշակում» յանուն արդարութեան հետևեալ երկտողը։

Ղարաբաղի առաջնորդութեան ծանր և պատասխանատու գործը իր անոր և մեծագործ անկարող շլինին առած Աշոտ եպիսկոպոս «Մշակի» 42 համարի խմբագրութեան ուղղած նամակում երևակայութեան այժ տալով ակնարկում է և ինձ, որ իբր թէ ես «հանգիստ չեմ թողնում» իրան «Տարազի» էջերում...

Արդ՝ որովհետև «Տարազի» աշխատակից-թղթակիցը ես չեմ, որին կարող է վկայել և յիշեալ խմբագրութիւնը, ուստի իրաւունք ես համարում ինձ անուանել Աշոտ եպիսկոպոսին ստախօս և զրպարտիչ։

Խորին յարգանօք՝

Պ. Զաքարեանց

Թիֆլիս, մարտի 14-ին

Տեղական հայ լրագիրներում տրատնվներ են յայտնում այն ատիթով, որ Ներսիսեան գպրոցի երդեցիկ խումբը ներկայ ճեմարանական տարվայ սկզբից մինչև այսօր դեռ չէ սկսել երգել Վանքի եկեղեցում Մակար Եկմալեանի ներդաշնակած քառաձայն պատարագը։

Այս պատճառով խնդրում եմ տպագրել յետագայ բացատրութիւնը։

Գպրոցի երգեցիկ խումբը դեռ Եկմալեանի ժամանակ էլ Վանքի եկեղեցում երգել սկսում էր հոկտեմբերին և երբեմն աւելի ուշ այն պատճառով, որ ամառվայ արձակուրդների ընթացքում երգիչներից շատերի ձայները փոփոխվում էին, նրանցից ոմանք էլ (գլխաւորապէս դասընթացն աւարտողները) հեռանում էին գպրոցից։ Ուստի ամեն տարի, դասերը սկսվելուց յետոյ, 2 և աւելի ամիս ժամանակ հարկաւոր էր լինում՝ խումբը վերակազմելու համար։

Այս տարի այս վերակազմութիւնը աւելի երկար ժամանակ պահանջեց մի քանի պատճառներով.—1) Նոր հրաւիրված մանկապատրաստ պ. Միրզայեանը Պետերբուրգից քիչ ուշ հասաւ Թիֆլիս, և պարապմունքն սկսեց սեպտեմբերի 19-ին. 2) Իբրև նոր ուսուցիչ և խմբապետ՝ նա պարտաւոր էր նախ հիմնվին ծանօթանալ աշակերտների տեսակն պատրաստութեան և փորձել իւրաքանչիւրի ձայնը, որպէս զի ըստ այնմ ձեռք գարնէ խմբի վերակազմութեան. 3) Պ. Միրզայանը յարմար գտաւ խմբի անդամների թիւը մեծացնելու, փոխանակ 40—50 հոգուց բաղկացած խմբի, ինչպէս լինում էր հանդուցեալ Մ. Եկմալեանի ժամանակ, կազմել 150 հոգուց բաղկացած խումբ, որի պատճառով խմբի մէջ մտան և բաղմաթիւ ձայնագրութիւն դեռ չը սովորած և երգեցողութեան մէջ անտարձ աշակերտներ և այլն։

Զը նայելով այս նոր հանգամանքներին՝ մենք սկզբում յոյս ունէինք, որ խումբը կարելի կը լինի պատրաստել մինչև ծննդեան տօնը (յունվարի սկզբները)։ Բայց դժբախտաբար վրա եկան քաղաքական բարդութիւններ և կեանքի անապահովութիւն Թիֆլիսում, որի պատճառով Ներսիսեան դպրոցում, մանկավարժական ժողովի կարգադրութեամբ, երկու անգամ ուսումն ընդհատվեց (հոկտեմբերի 15—նոյեմբերի 5, և նոյեմբերի 18—յունվ. 9), որի հետ միասին և խմբի պատրաստութեան գործը։

Վերոյիշեալ ամսթեւերը դիտելով՝ տեսնում ենք, որ հաղիւ թէ խմբի կազմը և ձայները որոշվել էին՝ վրա է հասնում առաջին դասադուլը (հոկտ. 17-ից), և դասերը վերսկսվելուց յետոյ 13 օր հաղիւ անցած՝ յայտարարում է երկրորդ դասադուլը, որ տևում է մինչև յունվարի 9-ը։ Սրանից երևում է, որ խմբի կանոնաւոր, անընդհատ և արդիւնաւոր պարապմունքներն սկսվել են իսկապէս յունվարի 9-ից և շարունակվում են մինչև այսօր։

Այսքան ժամանակամիջոցում խմբական երգեցողութեան դասեր եղել են ընդամենը 41 անգամ, որի ընթացքում պէտք էր ուրեմն թէ առանձին-առանձին ձայների հետ պարապել և պարբերները սովորեցնել և թէ ամբողջ խմբի հետ։

Խումբը ներկայումս զրեթէ պատրաստ է, և ծաղկաքրի ոտնին, եթէ ոչ աւելի առաջ, կը սկսէ երգել և անընդհատ կը շարունակէ։

Ի հարկէ, կարելի էր աւելի առաջ էլ սկսել վանքում խմբական երգեցողութիւնը փոքրիկ և աննպատաստ խմբով։ Բայց հէնց հանդուցեալ Եկմալեանի պատիւը պահանջում էր, որ անպատրաստ խմբի անկատար երգեցողութեամբ նրա գեղեցիկ գեղարուեստական գործը չաղաւղվի և մի և նոյն ժամանակ նոր-մասնագէտ-խմբապետը հասարակութեան առաջ հանդէս չը գայ այսպիսի անպատրաստ խմբով, ի վնաս թէ Մ. Եկմալեանի և թէ իր անուան։ Գեղարուեստի ճշմարիտ յարգողները կարծեմ այլապէս չէին կարող վարվել։

Սա. Մալխասեանց

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Պետերբուրգի արքունական թատրոնների դերասանները Վարլամովի ղեկավարութեամբ տալիս են ներկայացում Թիֆլիսում մի շարք ներկայացումներ։

Նրանց ներկայացրած պիեսները վերցված են հին բեպերտուարից, մեծ մասամբ Օստրովսկու հեղինակութիւններից։ Եթէ այդ պիեսները ներկայացում շատ քիչ են հետաքրքրում Թիֆլիսի հասարակութեանը, այնու ամենայնիւ հանդիսականների մեծ թիւ է յաճախում ներկայացումները, որովհետև այդեղները ցանկանում են տեսնել մայրաքաղաքի դերասաններին, որոնց անունը լսել են, որոնց մասին կարդացել են։

Զորեքշաբթի օր, մարտի 15-ին, խումբը ներկայացրեց Կրիլովի «Ընտանիք» պիեսը 4 գործողութեամբ։ Բոլոր կատարողներն էլ իրանց տեղումն էին։ Վարլամովը դիտէ ընտրել և կենդանի տիպ ստեղծել՝ տալով ընտիկան արտայայտութիւն բեմական հերոսին։ Դերասանուհի Շուվալովա խաղում է զգացմունքով և գիտէ ազդել հանդիսականի վրա։ Խոշոմով (Վլադիմիրի դերում) իւրացրել էր դժուար տիպը՝ տալով նրան թէ հարազատութիւն և թէ անկեղծութիւն։ Էլմինա շատ հընտուկ ներկայացնում է պառաւ կնոջ տիպը։ Այդում էին և միւսները։

Ցաւալի է, որ Պետերբուրգի դերասանները չափազանց պատգամաւորական են բեպերտուարի վերաբերութեամբ։

Սիրող

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Զատկի տօներից յետոյ կայանալու են Ներսիսեան հոգևոր դպրոցի նոր հոգաբարձական ընտրութիւնները։ Ընտրութիւններին բացի Թիֆլիսից մասնակցելու են նոյնպէս ամբողջ Թիֆլիսի թեմի եկեղեցական ծուխերի ներկայացուցիչները։

—

Սահմանադիր-ռամկավար կուսակցութեան Թիֆլիսի բիւրոն իր վերջին նիստում որոշել է. 1) Խնդրել բիւրոյի անդամ Ա. Ֆ. Սեմենովին կրկնել մարտի 19-ին, կիրակի օրը, կէսօրվայ ժամի 12-ին Աւշարեան աւդիտորիայում Թիֆլիսի «Արտիստական ընկերութեան» մէջ մարտի 5-ին կարդացած դասախօսութիւնը՝ «Լինել թէ՞ չը լինել Կովկասի Պետական Դումայի մէջ»։ 2) Ցանձնարարել բիւրոյի նախագահին կազմելու և տարածելու ժողովրդի մէջ համառօտ կանոններ Պետական Դումայի ընտրութիւնների և վերջինիս փունկցիաների մասին, թարգմանաբար, վրացերէն, հայերէն և թուրքերէն լեզուներով։ 3) Ցանձնարարել բիւրոյի քարտուղարին գրել բոլոր ցանկացողների համար յայտարարութիւններ ընտրողական ցուցակների մէջ մտնելու համար, բացատրել ընտրութիւնների վերաբերեալ կանոնները և տեղեկութիւններ տալ բիւրոյի ընակարանում (Барятинская, 6) ամենայն օր, երեկոյեան ժամի 6—7-ը և 4)

Նշանակել ապրիլի 4 և 5-ին, աւագ շաբաթվայ մէջ, բիւրոյի նիստեր՝ խորհրդակցելու առաջիկայ ընտրութիւնների վերաբերեալ զանազան հարցերի մասին, որին պէտք է մասնակցեն Անդրկովկասեան երկրի զանազան քաղաքների ներկայացուցիչները նոյնպէս։

—

Վերջին անցքերի պատճառով շերամի սերմեր պատրաստողները անկարող եղան մինչև մարտի 1-ը սերմերը ներկայացնել կովկասեան շրջանային կոմիտէի կայարանին քննութեան ենթարկելու համար, ուստի սերմերի ընդունելութեան ժամանակամիջոցը յետաձգված է մինչև ապրիլի 1-ը։

—

Թիֆլիսում յայտնի մանկավարժ վրացի Ա. Ղ. Բօսաօվսկի նախաձեռնութեամբ մի շարք միջնակարգ ուսումնարանների առաջադէմ մանկավարժներ մտադիր են բանալ «Նոր գիմնազիա» անունով մի հիմնարկութիւն, որի մասին խորհրդակցիները և բանակցութիւնները սկսված են։ Այդ գիմնազիան յատկապէս բացվելու է այն աշակերտների համար, որոնք այս կամ այն պատճառով ստիպված են եղել թողնել ուսումնարանը կամ հնարաւորութիւն չեն ունեցել գոյութիւն ունեցող միջնակարգ ուսումնարաններում առաջադիմել։ Այդ գիմնազիան սկզբում պէտք է բացվի 4-դ դասարանից մինչև 8-դ դասարան դասընթացքով, աւելի մեծ և լայն ծրագրով և առարկաներից միայն մէկը պէտք է աւանդվի և ոչ թէ առարկաների ամբողջ կուրսը, ինչպէս ներկայումս պահանջվում է, որ աշակերտը անպատճառ բոլոր առարկաները իմանայ դասարանը փոխելու՝ կամ հակառակ դէպքում թողնէ ուսումնարանը։ Այնպէս որ, այդ ուսումնարանը պէտք է մանկավարժութեան հիմնական այս պահանջը կատարէ՝ «Սովորեցրու և դասատուակիր համաձայն աշակերտների բնաւորութեան»։ Դասերի բաժանումն ևս այդ նոր ուսումնարանում այլ կերպ է լինելու, շաբաթվայ մէջ 4 օր (երկուշաբ. երեքշաբ. չորեքշաբ. և հինգշաբթի) նուիրված կը լինեն գիտութիւնների և նրանց զրականութեան ուսումնասիրութեան, իսկ մնացած օրերը—լեզուների և արուեստների ուսումնասիրութեան։ Մայրենի լեզուն ռուսաց լեզուի հետ հաւասար տեղ պէտք է բռնէ։ Տարեկան վարձ նշանակված է 40 ռուբլի։ Եթէ ուսումնարանի պահպանութեան ծախքը աշակերտական վճարները չը ծածկեն, ապա մնացեալ պակասորդը լրացնելու են Կովկասի զանազան քաղաքներից ապաւելիք նպաստներով և բարեգործ. ընկերութիւնների օգնութեամբ։ Ի միջի այլ տարկանների պէտք է ուսանվին՝ երկրի պատմութիւնը, հասարակագիտութիւն (սոցիօլօգիա), քաղաքական տնտեսութիւն, գիւղատնտեսութիւն, քիմիա, երկրաբանութիւն, աստղագիտութիւն և այլն։ Աւելի մանրամասն տեղեկութիւններ կը հաղորդենք իր ժամանակին։

—

Մարտի 15-

Երկաթուղու տարեկան հաշիւներից երևում է, որ մարդատար և բագրնթաց ապրանքատար գնացքներից մուտք է եղել 1905 թ. 3,045,750 ր., իսկ 1904 թ.—4,004,856 ռուբլի։ Փոքր արագութեամբ փոխադրված ապրանքներից 1905 թ. մուտք է եղե. 14,759,239 ր. իսկ 1904 թ. 25,742,324 ր. և միւս ապրանքներից 1905 թ. մուտք է եղել 1,063,096 ր. իսկ 1904 թ. 1,853,742 ր.։ Այդպիսով երկաթուղին ստացել է 1905 թ. 19,921798 ր., իսկ 1904 թ. 33,329,933 ր.։ Այդ համեմատութիւնից երևում է, որ երկաթուղին ստացել է 1905. 13½ միլիոն ռուբլի պակաս, քան 1904 թ.։

—

Ոստիկանական դեպարտամենտը, «Н. Вр.»-ի ասելով, վերջացրեց Մոսկվայի ապստամբութեան մասնակցողների գործերի քննութիւնը։ Մօտ 300 գործ անհետևանք են թողնվում, իսկ մօտ 6,000 հոգի պատասխանատուութեան են ենթարկվում։ Նրանց մի մասը ենթարկվում է դատաստանական պատասխանատուութեան, իսկ մեծամասնութիւնը ենթարկվում է ադմինիստրատիւ կարգով աքսորման հեռաւոր տեղեր։

—

Գանձակի սուրբ Նինաի իգական դպրոցում արդէն սկսել են աւանդել հայերէն լեզուն։

Ռուսաց փոդերի կուրսը վերջին ժամանակներս դարձեալ զգալի կերպով ընկել է։ Այսպէս, օրինակ, Ֆրանսիայում 100 ռուբլուն տալիս են 262 ֆրանկ, փոխանակ 266¾, ուրեմն 4⅔ ֆրանկ պակաս, Բերլինում վճարում են 100 ռուբլուն—213½ մարկ փոխանակ 216 մարկի. փոխանակութեան ժամանակ ևս կուրսի մէջ կորչում է Պարիզում 2%, Բերլինում 1 ր. 30 կոպէկ (100 ռուբլուն), Լօնդոնում—1 ր. 55 կ.։ Ամենից շատ կուրսի անկումն նկատելի է Ֆրանսիայում։

—

Պետերբուրգի Վվեդենսկի գիմնազիայի կրօնուսոյցը արձակված է իր պաշտօնից՝ լեյտենանտ Շմիդտի համար հոգեհանգիստ կատարելու պատճառով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Անցեալ տարի հոկտեմբեր ամսին Մակեդոնիայում կայացաւ համա-մակեդոնական յեղափոխական կօնգրէս, որին մասնակցում էին իբրև պատգամաւորներ, բոլոր տեղական, բայօնական կազմակերպութիւնների ներկայացուցիչները։ Այդ կօնգրէսը կայացել էր մի շարք կարևորագոյն վէճերը՝ կուսակցական տակտիկայի և կազմակերպութեան բոլոր հարցերի վերաբերմամբ։ Սակայն այդ վէճերը մինչև այսօր գաղտնի էին մնում և միայն այժմ «Մակեդոնա-Ադրիանապոլեան Պրեզիդիում» բօլգարական լրագիրը հրատարակել է, որից և քաղում ենք գլխաւոր կէտերը։

«Անկախ այն դրութիւնից, որ ստեղծել է երկրում եւրոպական քաղաքացիական գործակալների և օֆիցէրների միջամտութիւնը կազմակերպական շրջանի մի մասի ներքին կառավարութեան մէջ, կազմակերպութիւնը շարունակում է համարել ընդհանուր ժողովրդական զինուորված կռիւը թիւրքական իշխանութեան դէմ իբրև վախճանական միջոց այն կռւի, որ նա մղում է թիւրքական բէժիմը կործանելու համար։

«Ապստամբութիւնը համարվում է վերջնական արդիւնք ժողովրդի աւելի կամ քիչ տեւական գործունէութեան և կազմակերպված ազգաբնակութեան մի շարք մասնակի գործողութիւնների լրացումն։

«Կազմակերպութիւնը առաջվայ պէս հակառակ է ապստամբական այն գործողութիւններին (ինչ ծաւալով և լինեն նրանք), որ ձեռնարկվում են դրսի թելադրութեամբ և քաղաքական նկատումներով։

«Բայց հրաժարվելով այդ ապստամբական գործողութիւններից, կազմակերպութիւնը ձեռնամուխ է լինում աւելի ներգործական գործունէութեան, քան ցոյց էր տալիս ապստամբութիւնից առաջ և ամենամեծ ջանքը պէտք է գործադրէ, որ իրան՝ ժողովրդին պատրաստէ կռւի համար։ Պայմանները պահանջում են, որ կռիւը հիմնված լինի ժողովրդի պատրաստականութեան վրա և բղխէ նրանից, և ոչ անձնական ընտրութիւն կրէ ու բղխէ միայն չէտաներից։

«Ներկայ պայմաններում ակտիւ գործունէութեան հետևեալ ձևերն են յանձնարարվում։

1) Իշխանութիւնների կողմից եղած ամեն մի խոսք բէպրէսիային պատասխանել նոյն տեսակով։

2) Գործադրել կանոնադրութեան մէջ նախատեսված պատիժը իշխանութեան բոլոր այն գործակալների (զինուորական թէ ոստիկանական) դէմ, որոնք առանձին դէպքերում ցոյց կը տան յատուկ եռանդ՝ կազմակերպութիւնը հալածելու և անդիտութիւններ գործելու մէջ։

3) Լիակատար ազատութիւն տալ կազմակերպութեան կուսակիցներին գործելու մասնաւոր և անձնական վրէժխնդրութեան վերաբերմամբ, քրիստոնեայ և թիւրք ժողովրդի մէջ քաղաքացիական կռիւ հողի վրա, ինչպէս և իշխանութեան այն գործակալների վերաբերմամբ, որոնք կը մտածեն հալածել և ճնշել նրանց։

4) Վերոյիշեալ ոգով, լիակատար ազատութիւն է տրվում անձնական նախաձեռնութեան։

«Կազմակերպութիւնը միտս է նախամեծարպէս յեղափոխական թէ գաղափարով և թէ գործողութեան եղանակով, բայց մի և նոյն ժամանակ նա իրան պարտաւորութիւն է համարում տարածել իր գործունէութիւնը և ժողովրդի ամբողջ հասարակական և անտեսական կեանքի վրա։

Համարելով իր առաջին և գլխաւոր նպատակը՝ ժողովրդին պատրաստելը խօսքով և գործով զինուորված կռւի համար, կազմակերպութիւնը ձեռնարկում է յօգուտ ժողովրդի և տնտեսական կռւի թիւրքաց ժողովրդի հետ և, անկողմնակի կերպով, կուսակցութեան հետ, հոգ տանելով ժողովրդի ընդհանուր կուլտուրական զարգացման մասին։

Կազմակերպութիւնը ամենևին դէմ չէ, որ ժողովուրդը բողոքներ տայ—անձնական կամ հասարակական, ժողովրդի միջոցով կամ գլխաւորապէս—եւրոպական ներկայացուցիչներին՝ իշխանութիւնների կամայականութիւնների դէմ։

«Կազմակերպութիւնը կռիւ է յայտնում և բօլգարական էկզարխատին, այն չափով, որով նա հանդիսանում է բօլգարական ազգայնական ձգտումների արտայայտիչ. նոյն նկատումներով նա իր կապերը խզում է և բօլգարական կառավարութեան հետ։ Նա անխնայ կռիւ է յայտարարում, ի հարկէ, նաև սերբ, յոյն և ուրիշ այլացեղ յեղափոխական կազմակերպութիւններին, յայտարարելով ամբողջ Մակեդոնիան (առանց հին Սերբիայի) և ամբողջ Ադրիանապոլսի վիլայէթը—անբաժան «սէբրօրիա» ներքին կազմակերպութեան»։

Ահա սրանք են համա մակեդոնական կօնգրէսի գլխաւոր որոշումները։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՖՐԱՆՍԻԱ.

Պանպանողականներ։ Սրանք և Մէլինիստները չեն կարողանում ներել իրանց Բուվիէի մինիստրութեան անկումը, որ տեղի ունեցաւ «չափաւորների» պարպելու Բիբօյի շնորհիւ։ «Ֆիգարօ» լրագրի մէջ երեաց մի յօդուած, ուղղված Բիբօի դէմ, որին լրագիրը մեղադրում է այն բանի մէջ, որ նա արշի ծառայութիւն մատուցեց իր կուսակցութեան։ Բուվիէի անկումը ոչ միայն իշխանութիւնը անցնել տուեց աւելի արմատական կարիների, այլ և խայտառակեց չափաւոր պատգամաւորներին իրանց ընտրողների աչքում, որոնք շնորհակալ չեն լինի նրա համար, որ նրանք կառավարական ճնշածամ առաջ բերեցին Մարօկիօյի վէճի ժամանակ։

—Կոնբական միտինգ։ Մարտի 3-ին կայացաւ Պարիզում մի մեծ կռիվական միտինգ, որին մասնակցում էին 6000 հոգի։ Նախագահում էր յայտնի գրող Ֆրանսուա Կոպէ։ Նոր մինիստրութեան դէմ ուղղած հառերից յետոյ միտինգը որոշեց հիմնել «Կաթոլիկ ընդդիմադրութեան դաշնակցութիւն»։

Ֆրանսիական սոցիալիստներ։ Ֆրանսիական սոցիալիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտեոյ կուսակցութիւնից վտարված յայտարարեց ժողովրդական լուսաւորութեան մինիստր, սոցիալիստ Բրիանին, այն պատճառով, որ նա մտել է բուրժուական մինիստրութեան կազմի մէջ։ Սակայն այն ընտրողական շրջանի, որի ընտրելին է եղել Բրիանը, այն է Ս. Էտիէնի շրջանի ընտրական կոմիտեոյը բողոք յայտնեց կենտրոնական կոմիտեի որոշման դէմ և վճռեց պաշտպանել մինիստր-սոցիալիստի թեկնածութիւնը առաջիկայ ընդհանուր ընտրութիւնների ժամանակ, գտնելով որ Բրիանը այժմ աւելի քան երբ և իցէ արժանի է ընտրողների վստահութեան։

ԳԵՐՄԱՆԻԱ

Հրեաների փոխադարձ օգնութիւն։ Բերլինում կայացաւ գերմանական հրէաների փոխադարձ օգնութեան ընկերութեան անդամների ժողովը։ Այդ ընկերութեան յայտնի գործիչներից՝ դօքտոր Նաթան զեկուցում կարդաց Ռուսաստանում կատարած իր ուղևորութեան մասին՝ բաշխելու համար այն նուէրները, որ հաւաքվել են յօգուտ ջարդերից վնասված ռուսական հրէաների։ Դօքտորը պատմեց և այն տեսակցութեան մասին, որ ունեցել է կոմս Վիտտէի հետ։ «Զէ կարելի—ասաց Նաթան—աւելի խիստ խօսել ռուսական քաղաքականութեան մասին հրէաների վերաբերմամբ, քան խօսեց կոմս Վիտտէն, որ անուանեց ռուսաց օրէնսդրութիւնը հրէաների մասին անտանելի յիմարութիւն։ Սակայն կոմս Վիտտէն ոչ մի կոնկրէտ բարդրութիւն չառաջարկեց, այլ ասաց միայն, որ հրէական հարցը պէտք է լուծվի մաս-մաս—«par morceau»։ Այդ դօքտոր Նաթան ցոյց տուեց, որ մինչ կառավարութիւնը պաշտօնական գործակալութիւնների բերանով խօսում է այն մասին, թէ նա այլ ևս թոյլ չի տայ հրէական ջարդեր, Օդէսայի ընդհանուր շտաբի տպարանում տպվում են կոչեր, որոնցով դրդում են ժողովրդին՝ ջարդել հրէաներին։

ԱՒՍՏՐԻԱ.

Ընդհանուր բնեռղական իրաւունք։ Աւստրիական Դատաստանը մինիստրութիւնը, ինչպէս յայտնի է, մտցրել է պարլամենտը ընդհանուր ընտրողական իրաւունքի նախագիծը։ Այդ նախագծի առաջին ընթերցումից յետոյ, շատ հեռաբերիր ճառեր արտասանվեցին և այդ ճառի մէջ ամենաառաջին տեղը բռնում է իրա մինիստր-նախագահ Գաուշի ճառը, որ նա արտասանեց մարտի 14-ի (Ն. տ.) նիստում։ Նա կանգ առաւ այն ընդհանուր հարցի վրա, թէ ինչ նշանակութիւն կունենայ ներկայացուցչութեան դէմոկրատացումը պետութեան վիճակի վրա։ Ամեն անգամ, երբ ժողովրդի հասարակական իրաւունքները ընդլայնվում են, երկիրը է յայտնվում, որ պետութիւնը և կարգը կարող են կործանվել։ Բայց փաստերը հակառակն են խօսում։ Ամեն տեղ, ուր ժողովրդին կառավարութեան մէջ մասնակցութեան լայն իրաւունք են տուել, ըստացվել է ժողովրդական ինքնագիտակցութեան աճումը և պետութեան, իբրև այժի զարգացումը։ Կառավարութիւնները ընդհանուր ձայնատուութեան ժամանակ հաստատության զգացումն են ձեռք բերում, որովհետև նրանք գիտեն, որ ժողովրդական կեանքի բոլոր հոսանքները իրանց արտայայտութիւնն են ստանում պարլամենտական ձևի ժամանակ։ «Ինձ չեն վախեցնում—ասաց Գաուշը—այն մասյլ մարդարէութիւնները, որ ես այստեղ լսեցի։ Ես չեմ տեսնում որ Աւստրիան կարող է տարրանալ, իբրև հետևանք բէֆորմի։ Ես տեսնում եմ, ընդհակառակը, որ միլիոնաւոր ժողովուրդներ, լցված դժգոհութեամբ այդ բէֆորմի, այն է ընդհանուր ձայնատուութեան իրագործմամբ, կը կապվեն ամուր թելերով հայրենիքի շահերի հետ»։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

15 մարտի

ԱԼԺԷԶԻՐԱՍ, 15 մարտի։ Ամբաղրական յանձնաժողովը իր վերջին նիստում ամերիկացիների առաջարկած բանաձևի օգնութեամբ կարողացաւ հեռացնել ոստիկանության հարցի վերաբերեալ տարաձայնութիւնը։ Ցոյս կայ, որ յանձնաժողովի ընդունած բանաձևը կընդունվի նոյնպէս կօնֆերէնցիայի առաջիկայ նիստում։ Բաւարար կերպով է վճռված նաև մեծ պետութիւնների բանկին մասնակցելու հարցը։

ՐԷՖՐԻՇՆ, 14 մարտի։ Քաղաք վերադարձաւ գնդապետ Վօլկովի պատժական զօրախումբը, որը Ռայով գաւառում 3 ամիս և պատելով 10 շրջան, ձերբակալել է աւելի քան 300 գողերի, կողոպտիչների, ձիագողերի և ագրարային ու յեղափոխական շարժումներին մասնակցողների։

ՎԻՆԱ, 14 մարտի։ Անկարգութիւնների պատճառով քիմիկոտեխնիկական դպրոցը ժամանակաւորապէս փակված է։

ՊԱՐԻԶ, 14 մարտի։ Նանտում զինուորական դատարանը քննութեան առաւ Վաննա քաղաքի թնդանօթաձիգ կապիտան Դէկրուայի գործը, որ մեղադրվում էր իշխանութեան անհազանդութեան մէջ, որ արտայայտվել էր եկեղեցական գոյքերը ցուցակագրելու ժամանակ։ Դատարանում Դէկրուան յայտնեց թէ՝ իր կարծիքով վատութիւն արած կը լինէր, եթէ իր համոզմունքի դէմ հակառակ գործէր։ Դատարանը արդարացրեց նրան։—Մինիստրների խորհրդի նիստում Ֆալիէրը ստորագրեց զինուորական մինիստրի ներկայացրած հրամանը, որով Դէկրուան արձակվում է ծառայութիւնից թոշակի էկսը ստանալու իրաւունքով։ Զինուորական մինիստրը յայտնեց, որ ինքը զինուորական բայօնի բոլոր օֆիցէրներին տեղափոխելու է ուրիշ տեղեր։

ԱԼԺԷԶԻՐԱՍ, 14 մարտի։ (Հավաս)։ Այսօրվայ նիստի պաշտօնական հաշտութեան մէջ ծանուցագրվում է, որ կօնֆերէնցիան քննեց և ընդունեց օրինագծի 20 յօդուածը, որ վերաբերում է մարօկկեան բանկի հսկողութեանը։ Հսկելու իրաւունք ունեցող օտար մեծ պետութիւնների բանկերի թիւ որոշելը յետաձգված է, մինչև մի քանի պատգամաւորներ կուղարկեն իրանց հրահանգները։ Ապա կօնֆերէնցիան քննեց մարօկկեան ոստիկանութեան օրինագիծը։ Ամբաղրական յանձնաժողովի քննած 1, 2, 4, 5, 8 և 10 յօդուածները ընդունված են մի քանի փոփոխութիւններով, իսկ ոստիկանութեան կանոնագրութիւն կազմելու 3-րդ և ոստիկանութեան տեսուչ նշանակելու համար մի որ և է մեծ պետութիւն որոշելու հարցի 6-րդ յօդուածները յետաձգված են, մինչև մի քանի պատգամաւորներից հրահանգներ ստանալը։ Ոստիկանութեան տեսչի՝ դեպի զեպլոմատիկ հատատատութեան ունենալիք վերաբերմունքի 7-րդ և այն 8-րդ յօդուածը, որի համաձայն ոստիկանութեան տեսուչը, մի քանի դէպքերում, դիպլոմատիկ հատատատութեան պահանջով քննութիւններ պէտք է կատարել,—ընդունված են, նախապէս յայտնելու պատգամաւորների հրահանգները ստանալու մասին։ Նաւահանգիստներում Ֆրանսիայի և Իսպանիայի մարդիկները, օֆիցէրներ և ունտեր-օֆիցէրներ նշանակելու 11-րդ յօդուածի քննութիւնը յետաձգված է յաջորդ նիստին, որ նշանակված է հինգշաբթի օրը։ Ամբաղրական յանձնաժողովի նիստը կը կայանայ չորեքշաբթի օրը։ Այսօրվայ նիստը փակելուց առաջ Ամիսոզովը յոյս յայտնեց, որ կայացած համաձայնութիւնը աջող ազդեցութիւն կը գործէ կօնֆերէնցիայի վերջաւորութեան վրա։

16 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մարտի։ Մինիստրների Խորհուրդը մարտի 14-ի նիստում քննութեան առաւ ընթացիկ տեսակների մի քանի հարցեր և առանձին գործեր։ Քննվում էր արդարադատության մինիստրի առաջարկած՝ 1) քրէական բարձր դատարանի վերակազմութեան նախագիծը, որ ներկայացրված է Բարձրագոյն հատատատության համար, որը եղաւ կոմս Սալիաս առանձին խորհրդի որոշմամբ, երբ վերջինս զբաղվում էր Պետական Խորհրդի գործող հատատատության մի քանի անհրաժեշտ փոփոխութիւնների մշակելով, 2) շինական կեանքում առաջացած գործադուրներին մասնակցող անձանց պատիժների կանոնների նախագիծը, և 3) Սակալին կղզին աքսորելը վերացնելու առաջարկութիւնը։ Այս երեք նախագծերի համար պէտք է հայցվի Նորին Կայսերական Մեծութեան կամքը՝ մտցնելու Պետական Խորհուրդը։

ԼՕՆԴՕՆ, 15 մարտի։ Թագաւորը Ալբերտ I-ի կարգի ղաբնչան շնորհեց Բաղդի անգլիական փոխ-հիւպատոս Ուրկարդին, սրա առանձին քաջութեան համար, որ ցոյց տուեց Բաղդի սեպտեմբերի անկարգութիւններին՝ չորս անգլիացի բանտարների կեանքը ազատելու ժամանակ։

ՏՕԿԻՕ, 15 մարտի։ (Ռէյտէր) Պարլամենտը ընդունեց նոր մաքսային տարիֆ, որ ակնյայտնի հովանաւորող բնաւորութիւն է կրում։ Հարկի միջին չափը՝ 13%-ի։ Կառավարութիւնը յոյս ունի մաքսային մուտքը աւելացնել 25 միլ. իէնով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մարտի։ Սենատը կարգադրեց, որ Օդէսայի նախկին քաղաքապետ Նէյդգարդին ազատ համարել պատասխանատուութիւնից և յայտնել ժողովրդական լուսաւորութեան մինիստրին Նօվօսիլսկի համալսարանի բէկտորի գործունէութեան մասին, ինչպէս վկայ այդ գործին։ Բացի դրանից Սենատը որոշեց պատասխանատուութիւնից ազատել Մինսկի ռահանգապետ Կուլյուվին, և արգարադատութեան մինիստրին յայտնել՝ այդ գործի առիթով արած քննիչի սխալ գործողութիւնների մասին։ «Руск. Госуд.»-լրագիրը հերքում է այն լուրը, որ իբր առեալի մինիստրի պօրտֆէյլը առաջարկված է հասարակական գործիչ Սամարինին։

ԼՕՆԴՕՆ, 15 մարտի։ Համայնքների պատում ազատամիտ Սկոտոը պահանջեց, որ Անգլիան հրաժարվի շաքարի կօնվենցիայից։ Ազատամիտ Ֆօքնդօրը յայտնեց, որ նպատակայարմար չէ այժմ այդ հարցը յարուցել, որովհետև կօնվենցիան պարտաւորեցուցիչ է դեռ հինգ տարի։ Առեալի մինիստրը մատնացոյց արեց, որ կառավարութիւնը 2½ տարուց շատ չէ կարող հրաժարվել կօնվենցիայից, բոլոր յայտարարութիւնները դժուարին են կացուցանում միայն Անգլիայի դրութիւնը միջազգային շաքարի կօնվենցիայի մէջ։

ՊԱՐԻԶ, 15 մարտի։ Ալժէզիրասից ստացած լուրերի համաձայն, կօնֆերէնցիայի աշխատանքները դիմում են իրանց վախճանին։ Կասին մօտ կայացած վերջին մասնաբոր ժողովում, որին ի միջի այլոց մասնակցում էին և Ֆրանսիայի և Ամերիկայի ներկայացուցիչները, — ժողովականները հասել են էական հետևանքների, որ, ըստ երևոյթին, լիովին կարող են բաւարարեցնել շահագրգռված կողմերին։

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 15 մարտի։ Մինիստրների խորհուրդը իր երեկվայ նիստում վճռեց յետաձգել ընտրութիւնները, երկիրը կրելով, թէ մի գուցէ ներկայ յուզվելից դրութեան մէջ կօշուտը յաղթող հանդիսանայ։ Կառավարութիւնը յոյս ունի, որ մի քանի ամսից յետոյ դրութիւնը կը բարւոքվի և նոր ընտրութիւնները կը երաշխաւորեն պարլամենտը և սովորական գործունէութիւնը կարելի կը դարձնեն։ Ասում են, թէ Թագաւորը հրատարակելու է մի հրովարտակ, որի մէջ լուսաբանելու է պատգամաւորների պալատի յետաձգելու պատճառները։

ԼՕՆԴՕՆ, 15 մարտի։ «Պետերբուրգի գործակալութեան» թղթակցին անգլիական իշխանութիւնները պաշտօնապէս յայտնել են, որ Բինդրաբասի ռուսաց հիւպատոսը թող չը խանվի անգլօ-պարսկական վէճին կապել գնելով։ Հիւպատոսը վերադարձաւ իր տեղը տարաձայնութիւններ ծագելուց երեք օր յետոյ։ Բրիտանական հիւպատոսը սխալ է գործել, որ ցանկութիւն է յայտնել կաբէլ գնել նրա տան առաջ, պարսից իշխանութիւնները հակառակվել են, ցոյց տալով, որ բրիտանական հիւպատոսը կարող է կանգնեցնել հեռագիրները։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Նուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից՝
ԱԹԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և մրսուտա. հ.
Ե. Մ. ՔԻՇՕՎԱՆ—9½—10 ժ. աչքի. ներքին և նեղարդեան։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վենէրական և վիրաբուժութեան։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Դ. Ի. ԴԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԱՐԱՄԱՅԵՑԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ՅՈՒՆ-ՐԷՖԻՇ Ա. Ի. ՇԱՂԵՐԻՒՆՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Դ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.։
Ե. Դ. ԱԲԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախոհերի (կոնսիլիումի) և օգնականների համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով։
Եկատերինոսկայա փողոց, 101, տելեֆոն 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր։
Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս։
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ներքին, ներքին հ. և ղեղարտ-բուժութիւն։
Գ. Ն. ԴԷՄԻԴՕՎ—11—12 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն։
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. ԿԻՄՕՆՏ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԵԼԶԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի։
Գ. Ա. ԲԵՑԵՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնոզով, կատարվում միկրոսկոպական, բակտերիոլոգիական և քիմիական հետազոտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և տնանուտների (кормилица) ընտրութիւն։ Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.։ Օգնականի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան։ Դիշերթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին ծածկերներից։
(չ.տ.ի.) 43—100

Լոյս է տեսել և վաճառվում է
ՊՐՕՖ. Վ. ՉՕՄԲԱՐՏ
ԲԱՆԻՄԱՐԱԿԱՆ ՀԱՐՑ
Հեղինակից թոյլատրած թարգմ. գերման. խմբագրութեամբ և յաւելուած-բառաթերթով
Արտաշես Աբեղեանի
151 երես, գինը 40 կոպ. դուռարով գնողներին 20% զեղչ։
Նոյն հեղինակի՝ Տնտեսական և սոցիալ-քաղաքական հարցեր. գ. 10 կոպ.։ Դիմել Թիֆլիսի Գուտենբերգ և միւս հայ գրավաճառներին կամ թարգմանչին այս հասցէով. Тифлисъ, армян. Семинарія Нерсисянъ, А. Абегянъ. (ուր.կ.) 3—3

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԻԵՐԹԻ հայոց վիճակային կօնսիստորիայի ատենի մէջ նշանակված է աճուրդ այս ամսվայ մարտի 17-ին, առանց կրկնաճուրդի, կապալով տալու եկեղեցական կղզին, որ գտնվում է Վանքի ուաղ եկեղեցու հանդէպ։ Աճուրդին մասնակցող ցանկացողները պէտք է ներկայացնեն պահանջած գրաւական։
Անդամ կօնսիստորիայի Զ. քահ. Զարդեղեանց
(չ.հ.ու) 3—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վլադիմիրսկայա փողոց № 8։ (Ե.տ.)45—100

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վենէրական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւններու։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ։ Կանանց և երեխաների համար Խորհրդոյ։ Անհաւատութեան ու թերահաւատութեան հովերն փոթորիկներն եկեր անցեր են իր վրայէն, և Նարեկը մնացեր է անայլայլ։ Միշտ Նարեկն է նա, Հայ հոգեին հզօրագոյն խտացումը, Հայ հոգեպաշտութեան գերագոյն աւաչը։ Անիկա չի կենար պարարտաբանելու, անհաւատան համոզելու, թերահաւատը զարթի քերելու։ Անիկա վեր է մարդկային ձեռնարկութիւններէն։ Անիկա ամբողջ Հաւատքն է, Հաւատքն որ բոլորաւուր անձնատուր կ'ըլլայ Խորհրդոյն, Անսիթին, Հոգեկանին, անտեսանելիին, Անըմբռնելիին, բովանդակ այն Գերակային որ գեր ի վեր է քան զՄիտս։ Անոր մէջ բառերը կարծես մարդկային շուրթներէն չէ որ կ'ելնին, այլ կ'հոսին անհասանելի, անտեսակայելի, վէմ, յորդ աղբիւրէ մը ուր երբեք չէ հասեր Հայ միտքը։ Լեզուն այլ ինքնուրոյն է, իրեն յատուկ, սովորական Բերականութիւններու, համաձայնութիւններու կապերէն կազմանդամներէն զերծ, աւելի ազէկ պատշաճելու համար այնքան խակտիպ, այնքան ինքնաբուխ ներշնչումի մը։ Դարերով, անհամար սերունդներ կարգացեր և օրհներ են այս Մատեանը, գերազանցօրէն ամենամեծ Մատեանը զոր Հայք ունեցեր են Ս. Գրոց անմահ թարգմանութենէն հետքը։ Իրենց ուրախութեան մէջ անկէ սովրեր են չափաւորութիւն և խոնարհութիւն, իրենց յաջողութեան մէջանկէ իմացեր են աշխարհի ունայնութիւնը, և իրենց ցաւերուն մէջ անով միխիթարուեր են, իրենց հոգւոր յուսահատութեան մէջ անիկա զօտեպնդեր, քաջալերեր է զիրենք։ Դարեր պիտի անցնին տակաւին, երկմտութեան, հոգւոր տատայտանքի ու մտաւոր տանջանքի Դարեր, և Նարեկը պիտի մնայ միշտ՝ պիտի կարդացուի, պիտի սիրուի, ցորչափ Հայ մը մնայ աշխարհի երեսը։
Գիրի պահեստը կ'գտնուի կենտրոնական գրավաճառատոցում։ Օտար քաղաքներից պէտք է դիմել—Тифлисъ, Центральной книжной торговлѣ, ուղարկելով պատուէրի հետ զրքի գինն և ծան.ծախքը 2 ր 25 կ.։ Արտասահմանից Tiflis, libroirie Central. 1—1

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը հաշված են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի մէջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցերը.	11 ժ. 03 ր. ցերը.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցիշ.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցերը.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցերը.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցերը.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցերը.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցերը,
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 18 ր. գիշ
Ալեքսանդրօպօլից դուրս գալը	7 » 38 » եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցերը.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 13 ր ցերը.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցերը.
Ալեքսանդրօպօլից դուրս գալը	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցերը.	—	—	4 ժ. 24 ր գիշ.
Երևան հասնելը	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.

Կիրակի, մարտի 19-ին, առաւօտեան ժամը 11-ին Արտիստիական ընկերութեան դահլիճում կայանալու է

Հայոց Դրամատիկական Ընկերութեան
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

1) 1905/6 թ. թատրօնական տարեշրջանի հաշիւը։
2) Վերատուղող յանձնաժողովի զեկուցումը։
3) Վարչութեան հերթով դուրս գնացող իշխ. Մ. Թումանեանի, Ալ. Խատիսեանի և Տիգ. Յովհաննիսեանի փոխարէն 3 անդամների և փոխ-անդամների ընտրութիւնը։
4) Վերատուղող յանձնաժողովի 3 անդամի և 2 փոխ-անդամի ընտրութիւնը։
5) Տիկ. Մակարեանի և պ. Ալ. Մելիք-Այվազեանցի մրցանակաբաշխութիւնների մասնաժող